ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ

947.9 Ա 15 ա 1915 թ

83

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՀՊԱՆՈՒՄ Է

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

A 11/83662

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1995

ԳՄԴ 63. 3 (22) 52
Հ 205

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտորներ Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԸ և Վ. Դ. ԹՈՒՆՅԱՆԸ

ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա., ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս.
Հ 205 *Հայոց ցեղասպանությունը/*
Պատ. խմբ՝. Հ. Մ. Պողոսյան; ՀԳԱԱ. Հայոց ցեղասպանության թանգարան.— Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995.—72 էջ։

Սույն գրքույկում շարադրված է հայոց մեծ եղեռնի համառոտ պատմությունը։ Նշվում է, որ հայերի ցեղասպանությունը պետական մակարդակի հասցրեց սուլթան Արդուլ Համիդ 2-րդը, իրագործեցին հիմնականում երիտթուրքերը, ավարտեցին քեմալականները։ Լուսաբանվում են հայոց ցեղասպանության պատճառները, իրագործման եղանակներն ու հետևանքները։ Ընութագրվում են նրանց գոյամարտերը։

Գրքույկը նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար։

Հ 0503020913 ԳՄԴ 63. 3 (22) 52

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1995

Նվիրվում է
Հայոց մեծ եղեռնի
նահատակների
հիշատակին

ԻՆՉ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցեղասպանությունը մեծագույն հանցագործություն է մարդկության հանդեպ և դարերի պատմություն ունի։ Մարդկային հասարակության գոյության ընթացքում բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ, ենթարկվելով ցեղասպանության, անհետացել են պատմության ասպարեզից, սակայն դա չի խանգարել, որ այդ ոճրագործությունը շարունակվի նաև քաղաքակրթության արդի ժամանակաշրջանում։ Այդ առումով էլ ցեղասպանության կանխարգելման խնդիրը կենսական ու հրամայական անհրաժեշտություն է համայն մարդկության համար։ Ցեղասպանություն (գենոցիդ) տերմինը գրականության մեջ առաջին անգամ օգտագործվել է լեհ իրավաբան, դոկտոր Ռաֆայել Լեմկեի կողմից 1944 թվականին[1] և կազմված է հունարեն «genos» (ազգ, ռասա, ցեղ) և լատիներեն «cide» (սպանել) բառերից։ Այն հայերեն թարգմանությամբ նշանակում է ցեղասպանություն։

Ցեղասպանության երևույթի բնորոշումը տրված է Նյուրնբերգյան միջազգային զինվորական դատարանի (տրիբունալի) 6-րդ հոդվածում, ուր նշված է, որ «մարդկության դեմ հանցագործություններ են քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառված սպանությունները, ընաջնջումը, ստրկացումը, աքսորը և այլ դաժանությունները կամ քաղաքական, ռասայական ու կրոնական շարժառիթներով հետապնդումները, որոնք կատարվել են պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ...»[2]։

Միջազգային իրավունքի տեսանկյունից «գենոցիդ» տերմինը, ցեղասպանությունն հասկացությունը համակողմանիորեն բնութագրվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանում: 1946 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունված հատուկ բանաձևում նշվում է. «Ինչպես մարդասպանությունը հանդեցնում է առանձին մարդկային էակների ապրելու իրավունքի ժխտման, ցեղասպանությունը նշանակում է ամբողջ մարդկային խմբերի գոյատևման իրավունքի բացառում: Գոյատևման իրավունքի այդպիսի բացառումը վիրավորում է մարդկային խիղճը, մեծ վնասներ է հասցնում մարդկությանը, որը զրկում է մարդկանց այդ խմբերին մշակութային և այլ արժեքներից, հակասում է բարոյականության օրենքներին, Միացյալ ազգերի ոգուն ու նպատակներին»[3]: Նույն բանաձևում ուղղակիորեն մատնանշված է, որ «միջազգային իրավունքի տեսանկյունից, ցեղասպանությունը հանդիսանում է հանցագործություն, դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից, և ցեղասպանության իրագործման գլխավոր մեղավորներն ու մասնակիցները պատժվելու են անկախ այն բանից, թե նրանք առանձին անհատներ, պետական պաշտոնական անձեր կամ պետական գործիչներ են, և անկախ նրանից, թե այդ հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ այլ շարժառիթներով»[4]: Ելնելով այդ խնդրի կարևորությունից, Գլխավոր ասամբլեան առաջարկեց ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետություններին «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ հանցագործության կանխման և մեղավորներին պատժի ենթարկելու համար»[5]:

Ելնելով միջազգային իրավունքի սկզբունքներից ու նորմերից, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի այդ նստաշրջանի ընդունած բանաձևում նշված է, որ «ցեղասպանության բազմաթիվ հանցագործությունների հիման վրա կարելի է ցույց տալ, թե ինչպես լրիվ կամ մասնակիորեն բնաջնջման են ենթարկվել ռասայական, կրոնական, քաղաքական և այլ խմբեր»[6]: Համակողմանի քննարկման ու վերլուծության հի-

ման վրա ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, հիմք ընդունելով 1946 թվականի դեկտեմբերի 11-ի բանաձևը, երկու տարի անց, 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունեց «Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին»։ Այդ փաստաթղթում ցեղասպանության երևույթը բնորոշվում է որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նկատառումով կատարվող բոլոր գործողություններով։

Կոնվենցիայի առաջին հոդվածով սահմանված է. «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ անկախ այն բանից, թե խաղաղության կամ պատերազմական ժամանակ է կատարվում ցեղասպանությունը, այն համարվում է հանցագործություն, որը խախտում է միջազգային իրավունքի նորմերը, և որի դեմ նրանք պարտավորվում են կանխարգելման միջոցներ ձեռնարկել ու պատժել այն իրագործողներին»[7]։

Երրորդ հոդվածով պատժելի են համարվում հետևյալ գործողությունները.

«ա) ցեղասպանությունը,

բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

գ) ցեղասպանություն կատարելու ուղղակի և հրապարակային սադրանքը,

դ) ցեղասպանության կատարման հանցափորձը,

ե) ցեղասպանությանը գործակցելը»[8]։

Կոնվենցիայի վեցերորդ հոդվածով ցեղասպանություն կատարելու մեջ մեղադրվող անձինք պետք է դատվեն այն պետության իրավասու դատարանով, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը կամ այնպիսի միջազգային դատարանով, որը վերոհիշյալ կոնվենցիայի նկատմամբ կարող է իրավասություն ունենալ[9]։

Ցեղասպանությունը ոչ միայն ֆիզիկական բնաջնջում է, այլ նաև ազգային լեզվի ու մշակույթի ոչնչացում։ Աշխարհի տարբեր երկրներում ու կայսրություններում դարերով իրականացվել է ազգային-մշակութային ցեղասպանու-

թյուն, որով վերացվել է զանազան ազգերի ինքնուրույնությունը, մարդկային խմբերի ընդհանրությունը։ Գոյություն ունի և կենսաբանական ցեղասպանություն, որը տարբեր միջոցներով ու մեթոդներով արգելակում է ազգերի և ազգային խմբերի բնական աճը։

Ելնելով միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներից, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 1968 թվականի նոյեմբերի 26-ին ընդունեց «Կոնվենցիա (համաձայնագիր) ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի մասին»։ Այդ փաստաթղթում նշվում է, որ միջազգային իրավունքի մեջ հռչակվում ու հաստատվում է կարևորագույն սկզբունք, որով «ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ գոյություն չունի»[10]։ Կոնվենցիայի առաջին հոդվածում հստակորեն գրված է, որ «վաղեմության ոչ մի ժամկետ չի կիրառվում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին համաձայնագրի» նկատմամբ[11]։ Վաղեմության ժամկետը չի կիրառվում նաև այն դեպքում, երբ նույնիսկ ցեղասպանության կանխարգելման ու պատժի մասին համաձայնագիրը «հակասում է այն երկրի ներքին օրենսդրությանը, որտեղ կատարվել է այդ հանցագործությունը»[12]։

Ցեղասպանության համար վաղեմությունը չկիրառելու մասին կոնվենցիան ունի հետադարձ ուժ։ Դա նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչներն ու իրագործողները պատասխանատվության են ենթարկվում նաև մինչև կոնվենցիան կատարած այդ հակամարդկային հանցագործության համար։

Միջազգային իրավունքի սկզբունքներով մարդկության դեմ հանցագործություններ են համարվում նաև զավթողական պատերազմները, պատերազմի օրենքների խախտումը,

գերիների նկատմամբ դաժանությունների կիրառումը, զավթած տարածքների բնակչության բնաջնջումն ու ստրկացումը, այլազգի քաղաքացիների սպանություններն ու տանջահարումը, պետական և մասնավոր սեփականության կողոպուտը, քաղաքական, ռազմական և կրոնական շարժառիթներով հետապնդումները։ Նման հանցագործություններ կատարած պետությունները ՄԱԿ-ի կանոնադրությամբ և ընդունած համաձայնագրերով ենթարկվում են նյութական, քաղաքական ու բարոյական, իսկ մեղավոր անձինք՝ քրեական պատասխանատվության։ Այդպիսի հանցագործությունների համար Նյուրնբերգյան և Տոկիոյի դատավարություններում ընդունված որոշումներով պատասխանատվության են ենթարկվել ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի կառավարությունները և առանձին անձինք։

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԱՐՄԵՆՈՅԻԴԸ)

Բացի ցեղասպանություն հասկացությունից, կա նաև հայասպանություն (արմենոցիդ) հասկացությունը։ Որպես ցեղասպանության բնորոշ դրսևորում, հայասպանությունը պատմության տարբեր ժամանակներում գործադրել են հատկապես Թուրքիայի կառավարողները՝ ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության նկատմամբ։ Հայասպանություն տերմինը միջազգային շրջանակներում առաջին անգամ օգտագործվել է 1967 թվականի հուլիսին Փարիզում տեղի ունեցած ցեղասպանության կանխարգելման համաշխարհային 2-րդ համաժողովում, ուր քննարկվել է նաև առաջին աշխարհամարտում հայոց ցեղասպանության հարցը։ Լիբանանցի իրավագետ Մեթր Մուսա Պրենսը հայերի զանգվածային կոտորածները բնութագրել է որպես արմենոցիդ (հայասպանություն)։ Նա հայերի ցեղասպանությունը համարել է մարդկության պատմության մեջ անպատիժ մնացած ոճրագործություն[1]։

Հայերի ցեղասպանության մեջ մարմնավորված են անցած դարերի և արդի դարաշրջանի ցեղասպանությունների բարբարոսական գծերը։

Հայերի ցեղասպանությունը հաստատված է անհերքելի փաստերով և աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված հավաստի փաստաթղթերով։ Հայության նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունն ու գործողությունները սկզբնավորվել են դեռ այն ժամանակներից, երբ թուրքական ցեղերը Հեռավոր Արևելքից ու Միջին Ասիայից ներխուժել են Հայաստան ու Փոքր Ասիա։ Օսմանյան կայսրության կազմավորման ժամանակ այդ բռնապետության կառավարողները տարածաշրջանի ժողովուրդներին բաժանեցին երկու մասի՝ «հավատացյալների» (մահմեդականների) և «գյավուրների» (անհավատների կամ այլակրոնականների)։ «Գյավուրներ» էին համարվում հայերը, հույները, սլավոնական և այլ ժողովուրդներ։ Պատմությունը լիովին հերքում է թուրքական վայ պատմարանների, կառավարող շրջանների ու դիվանագետների այն պնդումները, որ իբր դարեր շարունակ ոչ մահմեդական ժողովուրդները Օսմանյան կայսրության շրջանակներում ոչ միայն ապրել են հաշտ ու խաղաղ, չեն ենթարկվել ազգային ու կրոնական հալածանքների, այլև օգտվել են բազմաթիվ արտոնություններից։

Օսմանյան արյունալի վարչակարգը անտանելի է եղել ոչ միայն հայերի, այլ նաև մյուս ժողովուրդների համար։ Հայերի նկատմամբ թուրքական կառավարողների իրագործած սպանությունները, հալածանքները, կողոպուտը և կրոնական անհանդուրժողականությունը իրականացվել է ավելի քան հինգ դար։ Ինչ վերաբերում է զանգվածային ցեղասպանությանը, այն իրագործվել է սկսած XIX դարի 90-ական թվականներից և շարունակվել է մինչև XX դարի 20-ական թվականները։

Հայերի ցեղասպանությունը պետական քաղաքականության աստիճանի բարձրացվեց Արդուլ Համիդ 2-րդի կառավարման տխրահռչակ «զուլումի» ժամանակաշրջանում։ Օգտվելով մեծ տերությունների թողտվությունից, սուլթանա-

կան Թուրքիայի կառավարողները մոլեռանդորեն շարունակեցին իրենց որդեգրած հայաջինջ քաղաքականությունը։

Պատմությունը ցույց տվեց, որ մեծ տերությունների Բեռլինյան կոնգրեսը (1878 թ.) չլուծեց հայկական հարցը, որն էլ պատճառ դարձավ արևմտահայության ողբերգության։ Այդ կոնգրեսից հետո ոչ միայն չիրականացվեցին նախանշված բարենորոգումներն ու բարեփոխումները Արևմտյան Հայաստանում, այլև սկսվեցին հայ բնակչության զանգվածային կոտորածները։ Ինչպես մատնանշել է ակադեմիկոս Վ. Խաչատուրը, այսպես կոչված բեռլինյան «կոնցերտը» կործանարար էր արևմտահայերի համար։ Այն դատապարտեց նրանց ֆիզիկական բնաջնջման»[2]։ Սկսվեց արևմտահայության նոր, էլ ավելի ողբերգական պատմության ժամանակաշրջանը։

Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակ մշակվեց ու գործողության մեջ դրվեց հայերի ցեղասպանության հավաղոր ծրագիրը։ Դրա մասին է վկայում թուրքական կառավարության ղեկավարներից մեկի, մեծ վեզիր Մեհմետ Քյամիլ փաշայի հետևյալ հայտարարությունը. «Եթե Եվրոպիոյ մասին մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն յիմարությունն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մէջ. խելօքությունը ջնջել, վերցնել է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխութեան առիթ և գործիք լինել։

Հիմա, այսօր գոնէ Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչնար, այլ այդ անունը հնչող կղակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենէն և միջամտութեան ամեն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին համար պէտք է և պետական իրավունք կը պահանջէ, որ որևիցէ կասկածելի տարր անհետ ընենք, որպես զի ապագայն ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անճետ ընելու ենք։ Եւ այդ ի դլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք

պատրաստ ունինք— քուրդ, չէրքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրօնական պատերազմ մը կը հրատարակենք, և դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ՝ որ ոչ զէնք ունի, ոչ դիմադրութիւն էլ և աշխարհիս ամենէն մեծ տէրութեանց մէկը՝ և ամենէն հարուստը (խոսքը Անգլիայի մասին է— Ա. Հ., Ս. Ս.) մեզ նիզակից է և մեր Ասիական աշխարհին երաշխաւոր։ Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ և չի գտնէ Տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանդիստ և այն ատեն կ՚զրաղինք ներքին գործերով և բարեկարգութեամբը»[3]։

Դա, փաստորեն, Օսմանյան կայսրության պետական ծրագիր էր, և զեկավարվելով դրանով, սուլթանական Թուրքիայի կառավարողները XIX դարի 90-ական թվականներին կազմակերպեցին և բարբարոսաբար իրականացրեցին արևմտահայերի ցեղասպանությունը։ Այդ ժամանակահատվածում ցեղասպանության ենթարկվեց 300 հազար հայ[4]։ Այլ, մասնավորապես գերմանական աղբյուրներում, նահատակների թիվը հասնում է շուրջ կես միլիոնի[5]։ Բացի սպանվածներից, օթևանից ու զոյության միջոցներից զրկվածների թիվը կազմեց մոտ կես միլիոն[6], որից 400 հազարը հայ այրիներն ու որբ երեխաներն էին[7]։

Փաստորեն, Բերլինի կոնգրեսից հետո, 18 տարվա ընթացքում արևմտահայության թիվը նվազեց 600 հազարով[8]։

Հայկական կոտորածները համակողմանիորեն լուսաբանված են «Եվրոպական կառավարությունների մեծ քաղաքականությունը 1871—1914 թթ.» 40 հատորանոց ժողովածուում[9] և բազմաթիվ հրապարակումներում։

Հատուկ աշխատությամբ հանդես է եկել Վ. Թենիշևը և հայերի այդ ցեղասպանությունը բնութագրել որպես «քաղաքակրթության ամոթ»[10], նրա խայտառակություն ու պատվազրկություն։

Հայերի ցեղասպանության քաղաքականությունն ու գործողությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին և իրենց դագաթնակետին հասան երիտթուրքերի կառավար-

ման ժամանակաշրջանում։ Այս, հայերի ցեղասպանության Մեհմետ Քյամիլ փաշայի ու սուլթան Աբդուլ Համիդի հրեշավոր ծրագիրը կոնկրետացվեց երիտթուրքերի պարագլուխների կողմից։ Ղեկավարվելով պանթուրքիզմի ու պանիսլամիզմի շովինիստական, մարդատյաց գաղափարախոսությամբ, երիտթուրքական պարագլուխները նպատակադրվել էին ոչ թուրք ժողովուրդների բռնի ձուլման, տեղահանման ու ցեղասպանության միջոցով ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև ստեղծել համաթուրանական համաշխարհային տերություն։ Դրան հասնելու համար նրանք զլխավոր խոչընդոտ էին համարում հայությունը, և նրա դեմ էլ ուղղված էր հարվածի հիմնական ուղղությունը։ Դարասկզբին երիտթուրքական կառավարողները ձեռնամուխ եղան արևմտահայության նկատմամբ իրենց առաջին ոճրագործությանը։ Նրանք 1909 թվականի ապրիլին կազմակերպեցին և իրագործեցին Ադանայի և շրջակա հայաբնակ վայրերի հայության սարսափելի կոտորածները։ Կիլիկիայի այդ տարածքում թուրքական զորքերի կողմից բարբարոսաբար բնաջնջվեց ավելի քան 35 հազար հայ[11]։ Ավերվեցին Ադանայի հայկական տներն ու մերձավոր հայկական գյուղերը։ Ադանայահայության կրած նյութական վնասը կազմեց ավելի քան 80 միլիոն դոլար[12]։ Երիտթուրքերի այդ ոճրագործության համար ոչ ոք չպատժվեց, իսկ Ադանայի նահանգապետը արժանացավ կառավարական պարգևի։

XIX դարի 90-ական թվականների և 1909 թվականի Ադանայի հայկական կոտորածները հաստատեցին թուրքական կառավարողների կողմից պետականորեն ծրագրված հայերի ցեղասպանության պատճառները։ 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո Օսմանյան կայսրության լծից ազատագրվեցին բալկանյան երկրների քրիստոնյա ժողովուրդները։ Կայսրության լծի տակ մնացել էր զանգվածային բնակչությամբ միակ քրիստոնյա արևմտահայությունը։ Ասիական տարածքում իրենց տիրապետությունը պահպանելու նպատակով երիտթուրքական կառավարությունը խնդիր էր դրել բռնությամբ թուրքացնել կամ բնա-

ջնջել արևմտահայությանը։ Կարևոր պատճառ էր նաև այն, որ արևմտահայությունը, Արևմտյան Հայաստանը, խոշընդոտ ու սեպ էին համարվում համաթուրանական տիրապետության ստեղծման ճանապարհին։ Հայերի ցեղասպանության պատճառ էր նաև հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը։ Դրա մեջ պանթուրքական դաղափարախոսներն ու պետական գործիչները մեծ վտանգ էին տեսնում իրենց տիրապետության տարածման համար։ Բնական է, ինչպես արևելահայությունը, այնպես էլ արևմտահայությունը դարերով հաստատված ռուսական կողմնորոշումը անվիճելիորեն համարում էին հայ ժողովրդի գոյատևման և ազգային ազատագրության կարևոր պայմաններից մեկը։

Թուրքական կողմը հայերի ցեղասպանության դրդապատճառ էր համարում նաև հայ կամավորական շարժումը։ Այդ պատճառաբանությունը նույնպես հիմնադուրկ է, քանի որ հայ կամավորական շարժման նպատակը հայության գոյատևման, ինքնապաշտպանության և ազգային ինքնորոշման խնդիրն էր։

Թվարկած բոլոր պատճառաբանություններն էլ ոչ բարոյական, ոչ իրավական հիմք չէին կարող հանդիսանալ հայերի ցեղասպանության համար, քանզի հայ ժողովրդի պայքարը իր պատմական հայրենիքում ապրելու և պետականություն վերահաստատելու համար էր։ Այդուամենայնիվ, շարունակելով իրենց նախորդների հայատյաց քաղաքականությունն ու հայաջինջ գործողությունները և չբավարարվելով Ադանայի հայկական կոտորածներով, դրանք համարելով հայերի ցեղասպանության զլխավոր փորձ, երիտթուրքական կառավարողները 1911 թվականի հոկտեմբերին Սալոնիկում հատուկ կոնգրես գումարեցին և որոշեցին վերջնականապես իրագործել իրենց ծրագիրը[13]։ Հայերի բնաջնջումը նրանք համարում էին հայկական հարցի «արմատական լուծում»[14]։ Բնաջնջման ու բռնի ձուլման քաղաքականությունը վերաբերվում էր նաև կայսրության ոչ թուրք մյուս ժողովուրդներին։ Այս նպատակով էլ Սալոնիկի կոնգրեսում որոշակի խնդիր

գրվեց հետևյալ ձևակերպմամբ. «Վաղ թե ուշ պետք է իրականացվի Թուրքական բոլոր հպատակների օսմանացումը, սակայն պարզ է, որ դա ոչ մի դեպքում չի կարող իրագործվել խաղաղ ձևով, այն պետք է կատարվի միայն զենքի միջոցով»[15]։

Փաստորեն հայերի ցեղասպանության հրեշավոր ծրագիրը մշակվել էր երիտթուրքական կառավարողների կողմից մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Այդ ծրագրի իրականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ սկսվեց պատերազմը։ Լեհ հայտնի հրապարակախոս, գրող Բոգդան Գեմբարսկին իր ուսումնասիրություններում նշում է, որ հայերի ցեղասպանության ծրագիրը կոնկրետացվել է առաջին համաշխարհային պատերազմի սկզբում, երբ դեռ չէր բացվել ռուս-թուրքական ռազմաճակատը։ Բ. Գեմբարսկին իր հրապարակումներից մեկում մեջբերում է կատարում երիտթուրքերի ղեկավարների 1914 թվականի հոկտեմբերի 15-ի նիստի սղագրությունից հետևյալ հատվածը. «Դոկտ. Նազիմ.— Անհրաժեշտ է հիմնովին լուծել հայկական հարցը՝ բոլոր հայերին իսպառ բնաջնջելով։ Կարծում եմ, որ արտահայտում եմ այստեղ եղողների ընդհանուր համոզմունքը՝ հաստատելով, որ միանգամից կլուծենք այս խնդիրը, հենց որ որոշումն ընդունվի։

Թալեաթ բեյ՝ ներքին գործերի նախարար.— Իմ անձնական պատասխանատվությամբ հայերի դեմ կգործադրեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ համարեմ...

Ձայների մեծամասնությամբ ընդունվեց հետևյալ բովանդակությամբ որոշում՝ հայերի տեղահանություն կատարել, միաժամանակ ոչնչացնել նրանց անապատում»[16]։

Հայասպանության այդ ծրագրի նյութերը շարադրված են նաև երիտթուրքական գործիչ Մեվլան-Զադե Ռիֆատի գրքում[17]։ Դրանք ֆրանսերեն թարգմանությամբ զետեղված են ֆրանսիացի էթիեն Ռադաֆի «Հայկական հարցը բաց է մընում» աշխատությունում, որն հրապարակվել է 1970 թվականին։ Նրանում բերված են երիտթուրքերի ղեկավարների

նիստում ընդունված փաստաթղթի հետևյալ տողերը. «Պետք է գործել արագ և վճռական...

Եթե մենք գտնենք այնպիսի տեղական ջարդերով, որ 1909 թվականին կազմակերպեցինք Ադանայում և հարակից շրջաններում, գործին օգնելու փոխարեն կվնասենք, որովհետև կարթնացնենք նաև նրանց կասկածները, որոնց ավելի ուշ ենք մտադիր ոչնչացնել։ Նկատի ունենք արաբներին և քրդերին։ Վտանգն ուրիմքն կեռապատկվի, ծրագրի գործադրումը կդժվարանա։ Պետք է միանգամից, ամբողջությամբ արմատախիլ անել հայ ազգը, ոչ մեկին չթողնել մեր հողում, հայ բառն անգամ մատնել մոռացության։ Պատերազմի առիթը հիանալի է, մենք՝ ո՛չ մեծ տերությունների միջամտությունից կարող ենք վախենալ, ո՛չ էլ համաշխարհային մամուլի բողոքի ձայնը հաշվի առնել։

Մինչև նրանք խառնվեն իրար, ամեն ինչ կատարված, վերջացած կլինի։ Այս անգամվա կոտորածը պետք է բնաջնջում դառնա, կենդանի չմնա ոչ մի հայ»[18]։

Այդ հակամարդկային որոշմամբ ու գործողություններով էլ իրականացվեց հայերի ցեղասպանությունը։

Երիտթուրքական կառավարողների վերոհիշյալ որոշումից հետո արձակվեցին ներքին գործերի նախարար Մեհմետ Թալեաթի հրամանները հայերի ցեղասպանության ու տեղահանության մասին։ Բերենք դրանցից մեկը. «Հայերի ապրելու և աշխատելու իրավունքը Թուրքիայում լիովին վերացված է։ Կառավարությունը, որն իր վրա է վերցնում այդ պատասխանատվությունը, հրամայում է օրորոցում չթողնել ոչ մի երեխա... Կառավարությունը որոշել է Թուրքիայում ապրող բոլոր հայերին լրիվ ոչնչացնել»[19]։

Հայերի ցեղասպանությունը սկսվեց և իրագործվեց հետևյալ էտապներով։ Առաջին՝ 1914 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 1915 թվականի ապրիլի 20-ը։ Երկրորդ՝ 1915 թվականի ապրիլի 20—24-ից մինչև այդ թվականի դեկտեմբերը։ Այդ ժամանակահատվածում հիմնականում իրագործվեց արևմտահայության տեղահանությունն ու ֆիզիկական

ընաջնջումը։ Երրորդ՝ 1915 թվականի դեկտեմբերից մինչև 1918 թվականի հոկտեմբերը։ Այդ ժամանակահատվածում շարունակվեց արևմտահայության մնացած մասի բռնի մահմեդականացումն ու ոչնչացումը։ Միաժամանակ դեպի Արևելյան Հայաստան թուրքական զորքերի ձեռնարկած արշավանքների ընթացքում սկսվեցին արևելահայության կոտորածները[20]։ Հայերի ցեղասպանությունը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Հայերի ցեղասպանության իրագործման համար ստեղծվեց 10 հազարանոց հատուկ կազմակերպություն՝ «Թեշքիլաթը մահսուսա», որի վրա դրված էր բոլոր գործողությունների կազմակերպումն ու վերահսկումը։

Արևմտահայության ցեղասպանության առաջին քայլերից մեկը 18-ից 45 տարեկան հայ տղամարդկանց զորահավաքն էր։ Զորակոչված հայ զինվորների մի մասը ռազմաճակատում, իսկ մյուս մասն աշխատանքային զորամասերում գնդակահարվեցին էնվեր փաշայի հատուկ հրամանով։ Կարճ ժամանակահատվածում գնդակահարվեց ավելի քան 60 հազար հայ զինվոր։

Հայոց մեծ եղեռնի խորհրդանիշ է համարվում 1915 թվականի ապրիլի 24-ը։ Դա իրոք խորհրդանիշ է, քանզի այդ օրը դաժանաբար գլխատվեց արևմտահայ մտավորականության ընտրանին։ Այդ օրը թուրքական բանտ նետվեցին շուրջ 800 հայ ականավոր մտավորականներ՝ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, մանկավարժներ, բժիշկներ, հրապարակախոսներ, հոգևորականներ, հասարակական գործիչներ։ Նրանց թվում էին Կոմիտասը, Գրիգոր Զոհրաբը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը, Երուխանը, Հովհաննես Թլկատինցին, Արտաշես Հարությունյանը, Տիգրան Չուկասյանը, Սմբատ Բյուրատը, Տիրան Քելեկյանը, Նազարեթ Տազավարյանը, Ենովք Շահենը, Լևոն Վարենցը և ուրիշներ։ 1915 թվականի հունիսի 15-ին Կոստանդնուպոլսի «Սուլթան Պայազիտ» գլխավոր հրապարակում կախաղան հանվեցին բան

հնչակյան հերոսներ, որոնք պայքարել էին հայերի ցեղասպանությունը կանխելու համար։

Հայերի ցեղասպանությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացվեց աննախադեպ բարբարոսական ձևերով։ Այսպես կոչված ռազմական նկատառումներով դեպորտացիայի (տեղահանության) պատրվակով արևմտահայությունը իր դարավոր հայրենիքից հակամարդկային բոլոր միջոցներով արտաքսվում էր Միջագետքի անապատները, մասնավորապես Տեր Զոր։ Տեղահանության բազմաթիվ ականատեսներ վկայում են, որ երիտթուրքական կառավարության կազմակերպած այդ հրեշավոր քայլը նշանակում էր հայության զանգվածային բնաջնջում։ Թուրքական զինվորականությունը և նրա գործիք դարձած քրդական հրոսակախմբերը դազանաբար տանջում ու սպանում էին հայ երեխաներին, կանանց ու տղամարդկանց։ Հայերի ցեղասպանությունը առավել զանգվածային իրագործվեց Մուշում, Էրզրումում, Սեբաստիայում, Բիթլիսում, Խարբերդում և այլուր։ Տրապիզոնի նահանգում տեղահանության ենթարկվեց շուրջ 30 հազար հայ, որոնք հիմնականում նահատակվեցին ճանապարհներին[21]։ Հայարնակ մյուս նահանգներում հայկական կոտորածների ականատես գերմանացիներից մեկը պատմել է, որ «թուրքերը գերազանցում էին բոլոր տիպի դաժանություններին։ Նրանք դազանաբար տանջամահ էին անում, խոշտանգում էին կանանց ու տղամարդկանց, ծերերին ու երեխաներին, սպանում էին կացիններով կամ խեղդում էին զանազան միջոցներով, հղի կանանց ծեծում էին հրացանների կոթերով մինչև նրանց մահանալը, իսկ երիտասարդ կանանց նվիրում էին թուրքական ու գերմանական սպաներին»[22]։ Մեկ ուրիշ գերմանացու նկարագրությամբ «խոշտանգումներից սպանված հազարավոր հայերի դիակները կարելի էր տեսնել Եփրատի ջրերում։ Անհամար հայերի քշում-տանում էին անմարդաբնակ վայրեր, երիտասարդ ամուսիններին հեռացնում էին միմյանցից, կանանց բռնաբարում էին ամուսինների աչքի առաջ, իսկ վերջիններիս սպանում էին արատավորված կանանց ներկա-

յությամբ»[23]։ Գերմանացի պաստոր (բողոքականների բահանա) Ֆիշերը պատմել է, որ «Վանի շրջանի որբանոցի մի խումբ հայ աղջիկների կախեցին ծառերից և սկսեցին քերթել գլխների կաշին... Մի կնոջ նորածին երեխային կացնով մի քանի մասի բաժանեցին և մոր բերանը մտցնելով խեղդեցին։ Որբանոցի մյուս աղջիկներին արատավորեցին և սպանեցին»[24]։

Այդ դաժանություններին դիմարվում էին նաև քաղցն ու հիվանդությունները, որոնց զոհ դարձան հարյուր հազարավոր հայեր։ Միայն Շեատատեի անապատում շուրջ 60 հազար հայերի անշիրիմ գերեզմաններ գոյացան[25]։

Տեր Զորի անապատում՝ Ռաս-ուլ-Այնիում, Հեզորեում և այլուր թուրքական յաթաղանի զոհ դարձան հարյուր հազարավոր հայեր[26]։ Տեր Զորը դարձավ հայոց հողեղեն և ջրեղեն գերեզմանոց։ Այո, Տեր Զորը իր շրջակա ամայի և ավազախառն անապատներով, Եփրատ գետով ու նրա ճյուղավորումներով դարձան հայության դեմ գործած ոճիրի ամենադժոխատեսիլ վայրերը։

Մեծ եղեռնի առաջին հայ վկայագրող Արամ Անտոնյանը իր փաստագրական «Մեծ ոճիրը» գրքում փաստեր է բերում այն մասին, որ միայն Տեր Զորում գաղանաբար ըսպանվեց շուրջ 200 հազար հայ[27]։

Ա. Անտոնյանն իր նույն գրքում հատվածներ է բերում հայկական կոտորածների ժամանակ Հալեպի գաղթականների տեսչության գլխավոր քարտուղար Նայիմ Բեյի հիշողություններից։ Ահա թե ինչ է գրում թուրք պաշտոնյան հայերի ցեղասպանության և տեղահանության մասին. «Հայոց եղերական տարագրութեան եւ սպանութեան խնդիրը, որ թուրք անունը մարդկութեան յաւիտենական անէծքին արժանի կը դարձնէ, անանկ կը կարծեմ թէ համաշխարհային պատմութեան մինչեւ այսօր արձանագրած զարհուրելի դէպքերէն ոչ մէկուն կը նմանի»[28]։

Տեր Զորում հայկական կոտորածը, բյուրավոր հայերի նահատակությունը երիտթուրքական կառավարողների կողմից հայ ժողովրդին պատճառած մեծագույն ողբերգություն-

Ա 83662

ներից է, որը չի կարող ջնջվել մարդկության հիշողությունից։

Հայերի զանգվածային ցեղասպանության մասին ցավով է գրել Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը. «Եթե հայ նահատակներուն դանկերեն լեռ մը բարձրանար, ապահովաբար շուք պիտի տար ան սուրբ Արարատի յաւիտենական ձիւնի երկնաբերձ կատարին...»[29]։

Հայոց մեծ եղեռնին ականատես եղան մեծանուն գրողներ Հովհ. Թումանյանն ու Ա. Շիրվանզադեն։ Վանի մարզի զարհուրելի տեսարանների մասին Հովհ. Թումանյանը գրել է. «Երեխաների ճակատներին մեխ են խփել, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը գրել են պղինձ ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են։ Մնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին»[30]։

Հայերի ցեղասպանության ականատես, Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն իր հուշերում գրել է. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, որքան այդ կոտորածները։ Անցյալում նշմարված մեծ ջարդերն ու սարսափները գրեթե աննշան են թվում 1915 թվականի հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ»[31]։

Աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված բազմաթիվ փաստաթղթերի, ուսումնասիրությունների պատմագիտական ու քաղաքագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ XX դարի ցեղասպանությունների շարքում հայոց ցեղասպանությունը առաջին զանգվածային ցեղասպանություն է, և դրա միջազգային ճանաչումն ու դատապարտումը պատմական դաս է համայն մարդկությանը՝ նոր ցեղասպանությունների կանխման համար։

ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ

Իթթիհատի կողմից կազմակերպած կոտորածները արևմտահայերի մեծամասնության համար անսպասելի էին։ Ուստի նրանք չկարողացան դիմադրավել դահիճներին ու սրի քաշվեցին։ Բայց մի շարք վայրերում հայերն արագորեն համախմբվեցին և դիմեցին ինքնապաշտպանության։ Այդպիսի վայրերից էր Վասպուրականը։ 1915 թ. մարտին Շատախ, Դավաշ, Թիմար, Հայոց ձոր, Արճեշ գավառների բնակիչները թեժ կռիվներ մղեցին թուրքական զորամասերի ու քրդական բաշիբոզուկների դեմ, սակայն, ի վերջո, տեղի տվեցին թշնամու գերազանց ուժերի առաջ և նահանջեցին դեպի Վան։

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Վանն ուներ 41 հազար բնակիչ, որից 23 հազարը՝ հայ, իսկ 18000-ը՝ գերազանցապես թուրք։ Քաղաքը բաժանված էր երկու մասի. մեկը կոչվում էր Այգեստան, իսկ մյուսը՝ Քաղաքամեջ։ Երկու թաղամասերն իրարից հեռու էին 5—6 կմ։ Նրանց միջտեղում բնակվում էին թուրքեր։

Վանի կուսակալ Ջևդեթ Բեյը, հետապնդելով Շատախի, Դավաշի և վերոհիշյալ այլ գավառների հայերին, շարժվեց Վան և այնպես պաշարեց Այգեստանը, որ, ժամանակակիցներից մեկի խոսքով ասած «թռչունն անգամ չէր կրնար անցնիլ...»։

Վանի հայ հոգևոր ու կուսակցական շրջանները փորձեցին բանակցություններով մեղմել իրավիճակը։ Բայց ապարդյուն։ Ավելին, թուրքական իշխանությունները նենգաբար սպանեցին հայ բանակցներին՝ դաշնակցության ղեկա-

վարներ Ա. Վռամյանին (Օ. Դերձակյան) և Իշխանին (Ն. Պողոսյան)։

Վանեցիների համար հարցը արդեն պարզ էր. կամ պետք է լուռ ու մունջ կոտորվեին, կամ պայքարի դուրս գային ու պահպանեին իրենց գոյությունը։ Եվ նրանք ընտրեցին վերջինը։ Արամ Մանուկյանի նախաձեռնությամբ ապրիլի 5-ին կազմվեց «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը», որի մեջ մտան Արմենակ Երկարյանը և Գաբրիել Սեմիրջյանը (ռամկավարներից), բուլղարացի Գրիգորը և Կայծակ Առաքելը (դաշնակցականներից), Հրանտ Դալիկյանը (հնչակյաններից) և Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցականներից կամ չեզոքներից)։

Թշնամու դեմ պայքարի դուրս եկավ Վանի ամբողջ հայությունը։ Փ. Թերլեմեզյանը հետագայում հուշագրում է. «Վանի հայությունը համոզվեց, որ կռվելն անխուսափելի դարձավ»։ Նա որոշեց կռվել, գիտակցելով, որ «հերոսական կյանքը թե պատվավոր է, և թե պարտավորիչ է»։ Վանեցիները հանդես եկան «Գեղ կանգնի, գերան կկոտրի» սկզբունքով, որի շնորհիվ հերոսամարտը դարձավ «բացարձակ ժողովրդական պատերազմ»։ Այն «այս ու այն կուսակցությանց և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ՝ է. ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան և ուս-ուսի կռվեցան։ Պատիվ այդ անընկճելի ժողովրդյան, որ հայի պատիվն ու մեր կյանքն ազատեց»[1]։

Ինչպիսին էր հակառակորդների ուժերի հարաբերակցությունը։ Ջևդեթ բեյն ուներ 6000 զինվոր և 5000—6000 համիդիե քրդեր, իսկ հայերը՝ 800 զինվոր։ Ահա այդպիսի խիստ անհավասար ուժերով էին բախվելու հակառակորդները՝ մեկը կոտորելու, բնաջնջելու մտադրությամբ, մյուսը՝ դիմադրելու և գոյատևելու հաստատ վճռականությամբ։

Վանի հերոսամարտը սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին, իսկ ապրիլի 21-ին թեժ կռիվները հասան գագաթնակետին։ Նրանք, ինչպես արձանագրում է ականատեսը «իրենց կատաղությամբ ոչ նախընթաց ունեին, և ոչ էլ այլևս կրկնվե-

ցան»[2]։ Թշնամու ինդանոթներն անընդհատ որոտում էին, նետելով օրական 400 ռումբ, իսկ զինվորներից յուրաքանչյուրը ժամում արձակում էր հազարավոր փամփուշտ։ Որոշ տեղերում թուրքերը դուրս էին գալիս խրամատներից և նետվում սվինամարտի։ Բայց ստանալով հակահարված, հետ էին շպրտվում։ Վանեցիները կռվում էին անձնուրաց ու հերոսաբար, ցույց տալով սխրանքների վառ օրինակներ։

Տղամարդկանցից հետ չէին մնում կանայք։ Նրանցից ոմանք նույնիսկ հետախուզության էին գնում և բերում արժեքավոր տեղեկություններ։ Ինքնապաշտպանությանն ակտիվորեն մասնակցում էին նաև պատանիները, որոնցից շատերը արագորեն նետվում էին թշնամու արձակած ռումբերի վրա, վնասազերծում էին և հանձնում զինագործներին, որոնք արկերի վառոդն օգտագործում էին փամփուշտներ պատրաստելու համար։

1915 թ. ապրիլին Այգեստանից անկախ ու կտրված՝ հերոսամարտեր բռնկվեց նաև Վանի վարչական կենտրոն Քաղաքամեջ կոչված թաղամասում։ Ինքնապաշտպանությունը այստեղ ղեկավարում էին Շուշանյան վարժարանի տնօրեն Հայկ Կոսոյանը, խանութպան Դ. Սարգսյանը, առևտրական Լ. Դալաճյանը, Եղնիկ վարդապետը և ուրիշներ։

Քաղաքամեջի իրադարձություններն սկսվեցին ու ծավալվեցին համարյա այնպես, ինչպես Այգեստանում։ Ապրիլի սկզբին զինվորական մարմինը նախքան ռազմական գործողությունների դիմելը, փորձեց բանակցություններ վարել Ջևդեթ բեյի հետ, հուսալով, խաղաղ միջոցներով պահպանել Վասպուրականի հայությունը։ Այդ նպատակով Եղնիկ վարդապետին ուղարկեցին նրա մոտ։ Սակայն կուսակալը կտրուկ պատասխանեց. «Այս երկիրը կամ հային պիտի մընա, և կամ թուրքին, երկուսի մեկտեղ բնակիլը այլևս անհնարին է»։

Ապրիլի 7-ին թշնամին հարձակման անցավ, ձգտելով դրավել Քաղաքամեջի հայկական դիրքերը։ Սակայն հայերն արիաբար պաշտպանվեցին։ Դաղազած հակառակորդն սկսեց ռմբակոծել նրանց տները։ Բնակիչները սկզբում շվա-

բեցին, նույնիսկ խուճապի ենթարկվեցին, բայց շուտով «խոլական խոյանքով մը դուրս եկան կռվի դավադիր թշնամու դեմ հանդիմանելու»։ Նրանք ոչ միայն հետ շպրտեցին թուրքերին, այլև այրեցին նրանց հիմնարկները։ Ակտիվ դեր խաղացին նաև կանայք։ Քառասնամյա Աղավնի Վարդապետյանը, արհամարհելով մահը և բախտի կամքին թողնելով իր վեց երեխաներին, քաջատեղյակ լինելով տեղանքին, հայ մարտիկներին առաջնորդեց դեպի թշնամու դիրքերը։ 16-ամյա Արամ Կապարուկյանը «զարմանալի անվախությամբ» հրկիզեց ոստիկանատունը և կենտրոնական դատարանը, իսկ Կարապետ և Մարտիրոս Մուրադյանները՝ փոստհեռագրատունը։ Նրանք այդ կառույցների հետ միասին այրեցին այնտեղ դիրքավորված և ինքնապաշտպանների վրա անընդհատ կրակ թափող հակառակորդի զինվորներին։ Ապա հայերը հրո ճարակ դարձրին բանկ-օտտոմանի և կառավարչատան շենքերը։ Այրվեց ու մոխիր դարձավ թուրքական բռնապետության խորհրդանիշը՝ օսմանյան պետական դրոշակը։ Ջևդեթ բեյը ստիպված էր խոստովանել, որ «կառավարության նամուսը քաղաքի մեջ կործանվեց»։

Ապրիլի 21-ին կուսակալը երկու հայ կանանց միջոցով նամակ ուղարկեց զինվորական մարմնին, պահանջելով հանձնվել, այլապես, սպառնում էր բոլորին կոտորել։ Սակայն հայերը արհամարհեցին նրա սպառնալիքները և շարունակեցին անզիջում պայքարը։

Մայիսի սկզբներին ռուսական զորամասերի և հայ կամավորական գնդերի հաղթական առաջխաղացման շնորհիվ Ջևդեթ բեյը թողեց ինչպես Այդեստանի, այնպես էլ Քաղաքամեջի պաշարումը և բռնեց փախուստի ուղին։ Ազատագրված հայերը սկսեցին այրել նրա ամրոցները։ Սահակ Ճանկոյանը բարձրացավ Վանա նշանավոր բերդի գագաթը, վայր շպրտեց դարեր ի վեր բռնության խորհրդանիշ դարձած օսմանյան դրոշակը և նրա փոխարեն ամրացրեց հայոց ազատության դրոշը։ Մայիսի 4-ին Այդեստանի ու Քաղաքամեջի հերոսամարտերի մասնակիցները հանդիպե-

ցին իրար և շնորհավորեցին միմյանց՝ համառ պայքարով ու զոհերի գնով ձեռք բերած հաղթանակը։

Վանեցիների հաղթանակը պայմանավորված էր նրանով, որ սկզբից ևեթ ընտրեցին ճիշտ որոշում։ Տեսնելով, որ թշնամին անողոք է ու դաժան, վարում է բացահայտ հայաջինջ քաղաքականություն, հերոսաբար հանդես եկան նրա դեմ, գերադասելով պատվաբեր մահն՝ անպատիվ ստրկությունից։ Նրանք կարճ ժամանակամիջոցում համախմբվեցին, մի կողմ դրեցին իրենց կուսակցական ու անկուսակցական ներհակությունները, ցուցաբերեցին գերազանց կազմակերպվածություն ու կարգապահություն, դարձան մեկ սիրտ, մեկ մարմին և միասնաբար դիմադրավեցին թշնամուն։ Թեև կտրված էին արտաքին աշխարհից, այնուամենայնիվ, նրանք ուժ ու եռանդ էին ստանում ռուսական զորամասերի ու հայ կամավորների խմբերի մոտալուտ ժամանման ու օգնության հույսից։

Վանի հերոսամարտը բարձրացրեց հայ ժողովրդի պայքարի ոգին և ապացուցեց, որ կարելի է փրկվել անգամ ահեղ թշնամուց՝ համախմբված ու վճռական պայքարով։ Այդ հերոսամարտի շնորհիվ կոտորածներից փրկվեց 150—200 հազար հայ։

Արևմտահայության ինքնապաշտպանության մարտերը ծավալվեցին նաև Մուշ-Սասունում։ 1915 թ. մայիսին, երբ Թուրքական իշխանությունները հրաման արձակեցին տարոնահայության բռնագաղթի մասին, Մշո հոգևոր առաջնորդ Վարդան վարդապետը և դաշնակցության ղեկավարներ Ռուբեն Տեր-Մինասյանն ու Վահան Փափազյանը, գտան, որ չպետք է դիմադրել, քանզի դա կլինի ավելի աղետաբեր, որ ռուսական զորամասերը շուտով կգան և կլուծեն բոլոր հարցերը։ Սակայն հայդուկներ Հաջի Հակոբ Կոտոյանը, Պոլեյան Մջոն (Պոլե) և ուրիշներ, մերժելով նրանց խորհուրդը, վճռեցին դիմադրավել թշնամուն։

Մարտերը Թուրքական զորամասերի և հայ դիմադրական ուժերի միջև սկսվում են 1915 թ. հուլիսի 11-ին։ Հա-

յերը կռվում են անօրինակ քաջութիւնամբ։ Նրանք ոչ միայն հետ են մղում թշնամու հարձակումները, այլև պատճառում զգալի վնաս։ Ոմանք, վառնգելով իրենց կյանքը, թափանցում են թուրքերի զորամասերը և սպանում նրանց հրետանավորներին։ Տղամարդկանց հետ միասին արիաբար կռվում են նաև կանայք։ Ականատեսը գրում է. «Ու ինչպես շքանշանալ ու չհիանալ մշեցի հայ կիներու վրա, որոնք ամենքն ալ լացն ու վախը թողած՝ փոքր տղոց իրև բաժին, իրենք կմասնակցեին այդ անհավասար գոտեմարտին, իրենց կրովողներուն ջուր, հաց, ռազմամթերք հայթայթելով, գիրքեր շինելով, անձներովը կռվողները պաշտպանելով իրենց շորս կողմը, խնդում դեմք ցուցանելով հերոսներուն։ Մնան ազջիկ, ապրեցան տանջանքը և մեռան իրև հերոս տղամարդ»[3]։

Հուլիսի 12-ին շարունակվում է մշեցիների գոյամարտը։ Թշնամին կատաղորեն ռմբակոծում է հայոց գիրքերը, քանդում ու ավերում է դրանք, նեռվում ավինամարտի։ Հայերը, որքան էլ կռվում են անձնուրաց, անհավասար մարտերում ստիպված են լինում նահանջել դեպի Զորի թաղը։ Հաջորդ օրը թշնամին շարունակում է ռմբակոծումները, նորանոր վնասներ հասցնելով հայերին։ Ընկնում են նրանցից շատերը, սպառվում է նրանց ռազմամթերքը, տեղ չի հասնում սպասվող ռուսական զորամասերի օգնությունը։ Հայերը ստիպված են լինում թողնել իրենց գիրքերը, փորձում են ճեղքել հակառակորդի պաշարումը և բարձրանալ Սասուն։ Բայց նրանց փոքր մասն է կարողանում տեղ հասնել։

1915 թ. ամռանն ահեղ մարտեր ծավալվեցին Սասունում։ Օգոստոսի 1-ին թուրքական զորաբանակները քրդական համիդիեի գնդերի հետ միասին անցան հարձակման՝ գրավելով հայկական գյուղերը։ Սասունի աշխարհիկ ու հոգևոր երևելիները՝ փեթարցի Մանուկը, Դավիթ Երիցյանը, սոլոխցի տեր Ստեփանը, գոմսեցի Կորյունը, տեր Մամբրեն և ուրիշներ համախմբեցին լեռնականներին և գոյապայքար մղեցին հակառակորդի դեմ։ Ահեղ կռիվներ եղան Գոմսոյ

վանքի, Անդոկի, Իշխանաձորի, Շատախի և Կելիթ-Կուզանի գյուղերում։ Հայերը ոչ միայն կասեցնում էին թշնամու առաջխաղացումը, այլև հաճախ փախուստի մատնում նրան։ Բայց կատաղած հակառակորդը, համալրելով իր զորամիավորումները, անցնում էր նոր հարձակման։ Այդ վճռական պահին դաշնակցության վերոհիշյալ ներկայացուցիչները հայտարարում են սասունցիներին, թե նրանք ազատ են, ով ինչպես կարող է, թող փրկվի և, վերցնելով իրենց հետ տասնյակ զինվորներ, փախչում են Կովկաս։ Առաջանում է խուճապ։ Ոմանք շվարում են, մյուսները նրանց հետևից լքում են Սասունը։ Սակայն հայդուկային կռիվներում կոփված և բազմաթիվ փորձանքներով անցած Մկրտիչ Պոլեյանը, կոզբեցի Վարդանը և նրանց զինակիցներն արագորեն կազմակերպում են լեռնականներին և ղեկավարում նրանց գոյապայքարը։

Թշնամին, օգտվելով իր առավելությունից, շարունակում է առաջ ընթանալ՝ ոչնչացնելով լեռնականների կուտակումները։ Ողջ մնացած սասունցիները շարունակում են կռիվները։ Բայց ինքնապաշտպանության ճակատագիրն արդեն վճռված էր։ Օգոստոսի կեսերին հակառակորդը, համոզվելով, որ լեռնականներն արդեն ջախջախված են, իր զորամասերը դուրս է բերում Սասունից, թողնելով միայն առանձին ջոկատներ։ Թուրքական իշխանությունները փորձում են խաբեությամբ որսալ դեռ դիմադրող հայերին։ Ուստի հայտարարում են, թե ովքեր կամովին հանձնվեն, կըփրկվեն կոտորածներից և անվնաս ու ապահով կվերադառնան իրենց գյուղերը։ Դյուրահավատները լսում են ու սրի քաշվում, իսկ թուրքերին լավ ճանաչողները պատասխանում են. «Մեր լեռներուն մեջ անոթի ու ծարավ մեռնիլ ավելի լավ է, քան թե երթալ թշնամիին ոտքը և նախատինքի և անարդանքի մեջ մեռնիլ։ Այստեղ մահը բարձր ու վսեմ է, որքան բարձր ու վսեմ են մեր լեռները։ Այստեղ մահը անկեղծ է և մաքուր, որքան մաքուր են մեր լեռներու օդն ու ձյունը»։ Այսպես՝ հակառակորդին չհավատացողներն ու չը-

հանձնվողները փրկվեցին, երբ ռուսական բանակները, ջախջախելով թուրքական զորամասերին, նվաճեցին Մուշն ու Սասունը։

Արևմտահայերը ինքնապաշտպանական նշանավոր մարտերը մղեցին նաև Շապին-Գարահիսարում։ Պատերազմի նախօրյակին այդ քաղաքն ուներ մոտ 95 հազար բնակիչ (թուրք, քուրդ, չերքեզ, հույն, հայ և այլն), որից 25 հազարը՝ հայ։ Նրանք, հատկապես հայերը, զբաղվում էին հիմնականում արհեստներով ու առևտրով և մասամբ երկրագործությամբ։

Երբ լուր եկավ, որ թուրքական իշխանությունները հայերի զանգվածային ջարդեր են կազմակերպելու նաև Շապին-Գարահիսարում, նրանք պատրաստվեցին ինքնապաշտպանության։ Քաղաքի հասարակական-քաղաքական տարբեր շրջանների ներկայացուցիչները՝ Ղուկաս Դովլաթյանը (Տեովլաթյան) կամ Ղուկաս Աղբարը, Ավագ Տուրիկյանը (հնչակյաններ), Շապուհ և Իսրայել Օգանյանները, Գարեգին Կարմիրյանը (վերակազմյալ հնչակյաններ), Վահան Հյուսիսյանը, Հմայակ Գարակեոզյանը (դաշնակցականներ) և Գասպար Ղուկասյանը (անկուսակցական) հավաքվեցին խորհրդակցության ու կազմեցին զինվորական խորհուրդ։ Նրանք կոչ հղեցին իրենց հայրենակիցներին՝ թողնել ամեն ինչ և նվիրվել ինքնապաշտպանության գործին։ Շուտով հայերը սկսեցին քանդել քաղաքի սալահատակները և դիրքեր պատրաստել։ Միաժամանակ դիրքերի վերածեցին իրենց տները և նպատակադրվեցին՝ «բնաջնջվելի առաջ բնաջնջել»։

1915 թ. հունիսի 3-ին թուրքական հրամանատարությունը հրամայում է ոմբակոծել հայկական թաղամասերը։ Հայերը պատասխանում են հրացանային կրակոցներով, նռնակներով և կասեցնում հակառակորդի հաղարավոր զինվորների առաջխաղացումը։

Հունիսի 10-ին թուրքերը վերսկսում են կրակը։ Նրանք փորձում են գրավել հայերի դիրքերը։ Բայց ընկնում են ինքնապաշտպանության մարտիկների կրակի տակ, կորուստներ տալիս ու հետ շպրտվում։ Հաջորդ օրը թշնամին

նոր հարձակման է անցնում՝ առաջ մղելով խուժանին։ Հայերը, սակայն, շարունակում են համառ մարտերը։

Հունիսի 15-ին հայտնվում է կուսակալ Մուամերի բանագնացը, որը սպիտակ դրոշ պարզած, հայերին է տալիս նրա նամակը, ուր ասվում էր, որ հանձնվելու դեպքում նրում կշնորհվի բոլորին, այլապես սպառնում էր «թնդանոթներով հիմնեն կործանել բերդը...»[4]։ Զինվորական խորհուրդը տալիս է մերժողական պատասխան։

Հունիսի 19-ին կուսակալ Մուամերին նոր բանագնացներ է ուղարկում և պահանջում հանձնվել։ Հայ մարտիկներից ոմանք, տառապելով սովից ու ծարավից, մտածում են ընդունել նրա առաջարկությունը, նույնիսկ պատրաստակամություն են հայտնում ստանձնել բանակցությունների պարտականությունը, սակայն մեծ մասը հայտարարում է. «Մեռնելու երկու ձև կա, պատվավոր և անպատիվ մահ, թող աշխարհը ասի, թե շապինդարահիսարցիք պատվով մեռան»[5]։ Դաղաղած թշնամին որոշում է դրոհել ավելի մեծ ուժով և հիմնովին ոչնչացնել հայերին։ Հունիսի 23-ին կրակ է թափում բերդի վրա։ Զինվորները դուրս են գալիս իրենց դիրքերից և թնդանոթային կրակի պաշտպանությամբ փորձում ներխուժել բերդը։ Բայց հայերը պաշտպանվում են խիզախորեն։ Կանայք ռումբեր են շպրտում թուրքերի վրա։ Անսպասելի պայթյունից թշնամին փախչում է խուճապահար։ Ինքնապաշտպանության մարտիկներն ազատ շունչ են քաշում, բայց պարենամթերքի ու ռազմամթերքի պակասը, սովը ու համաճարակը դժվարացնում են նրանց պայքարը, անասելի վատթարացնում վիճակը։ Շապինդարահիսարցիները շարունակում են հուսալ, թե շուտով կգա ռուսական բանակը, բայց ապարդյուն։

Զուկաս Ադրարը հրավիրում է խորհրդակցություն և քննարկում իրավիճակը։ Ոմանք առաջարկում են ճեղքել թշնամու պաշարումն ու դուրս գալ, մյուսները գտնում են, թե դա անհնար է, պետք է անձնատուր լինել։ Հայերի մի մասն ընդունում է առաջին, իսկ մյուսը՝ երկրորդ առաջարկությունը։ Հունիսի 29-ին, այսինքն՝ գոյակովի 27-րդ օրը

առաջինները Ղուկաս Դովլաթյանի գլխավորությամբ հնարամիտ ու սրընթաց հարձակումով ճեղքում են թշնամու օղակը և հեռանում, իսկ երկրորդները մնում են բերդում։ Շուտով թուրքերը ներխուժում են բերդ և անխնա կոտորում բոլորին։ Թշնամին հետապնդում է պաշարումից դուրս եկածներին, ձգտելով ոչնչացնել նրանց, սակայն դա նրան չի հաջողվում։ Ազատվածները վարում են պարտիզանական պայքար, որոշ տեղերում նույնիսկ շրջապատում ու բնաջնջում թուրքական զինախմբերին։ Կիրճն անցնելիս Ղուկաս Աղբարը ընկնում է թշնամու դնդակից։ Նահատակվում են նաև նրա զինակիցներից շատերը։ Քշերին է հաջողվում միանալ ռուսական բանակին[6]։

Իթթիհատի յաթաղանի դեմ պայքարի ելան նաև Ուրֆայի հայերը։ Այդ քաղաքն ուներ 100 հազար բնակիչ, որից 35 հազարը հայ։ Իմանալով կառավարության հայաջինջ քաղաքականության մասին, նրանք որոշում են դիմադրավել։ 30-ամյա Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ ստեղծվում է զինվորական խորհուրդ, որի կազմում մտնում են Հարություն Ռասթեքելյանը, Վաղարշակ Մնսրոպյանը, Հարություն Սիմոնյանը և ուրիշներ։ Ինքնապաշտպաններն ունեին, ոմանց տվյալներով՝ 800, իսկ այլոց՝ 2000 մարտիկներ՝ հին հրացաններով ու սահմանափակ քանակությամբ փամփուշտներով։

1915 թ. սեպտեմբերի 29-ին ուրֆացիները իրենց թաղերը վեր են ածում բարիկադների և որոշում կռվել «մինչև վերջին փամփուշտը ու վերջին մարդը»։ Սեպտեմբերի 30-ին նրանք պատշաճ հակահարված են տալիս մոլլաների առաջնորդությամբ իրենց վրա հարձակվող խուժանին ու փախուստի մատնում։

Հոկտեմբերի 1-ին Ջեմալ փաշայի կարգադրությամբ Ուրֆա է գալիս Ֆահրի փաշան՝ 13 հազար զանվորներով և պահանջում հանձնվել, խոստանալով ներում և անձի ու գույքի ապահովություն։ Սակայն Զինվորական խորհուրդը մերժում է, հայտարարելով՝ «Ձենք ուզեր ծիծաղելի ըլլալ ձեր

աշքին... Ուրֆայի հայությունը պիտի կռվի մինչև վերջին մարդը, ոչ դուք պիտի խնայեք մեզ, և ոչ ալ մենք ձեր զինվորներուն»[7]:

Թշնամին անցնում է հարձակման, զինվորները «սալավաթ» գոռալով զրոհի են նետվում: Սակայն հայերը կանգնեցնում են նրանց զրոհը, պատճառելով մեծ կորուստներ: Կռվի ընթացքում վիրավորվում է Մ. Յոթնեղբայրյանը: Նրա զործը շարունակում է Հարությունն Ռասթեքելյանը: Դոյամարտը գնալով ընդունում է ավելի ու ավելի կատաղի բնույթ: Երկուսնեք զոհեր են լինում, ընկնում են նաև Ռասթեքելյանն ու իր զինակիցները: Մ. Յոթնեղբայրյանը թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպան է լինում: Թուրքերը արագացնում են իրենց առաջխաղացումը, սպանում, թալանում ու կողոպտում են հայերին, անարգում կանանց: Գերված հայուհիներից մեկը, որին հրոսակներն ուզում էին մերկացնել ու ծաղրուծանակի ենթարկել, ասում է. «Կեցեք, ես ձեռքովս մերկանամ», և դրպանից հանելով ատրճանակը, գնդակահարում է թուրք սպային և ինքն էլ ընկնում ասկյարների գնդակից:

1915 թ. հոկտեմբերի 23-ին թուրքերը վերջնականապես գրավում են հայերի զիրքերը: Նրանք գերվածների մեծ մասին սրի են քաշում կամ կախաղան բարձրացնում: Քաղաքի 35 հազար հայերից կենդանի են մնում 5 հազարը, որոնց երիտթուրքական իշխանությունները թշում են Տեր Զորի անապատները:

Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների նշանավոր դրվագներից մեկն էլ Մուսա լեռան հերոսամարտն էր: Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերն ապրում էին Միջերկրականի ափին ընկած Սուեղիայի գավառի վեց գյուղերում՝ Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Խդրբեգ, Յողուն-Օլուք, Վագրֆ ու Քերուսին, որտեղ, ըստ որոշ հեղինակների, կար 5000, իսկ ըստ այլոց՝ 6811 մարդ:

1915 թ. գարնանը սուեղահայերը, լսելով հայկական կոտորածների մասին, որոշում են թողնել տուն ու տեղ,

վերցնել զենքերն ու պարենը, բարձրանալ Մուսա լեռը և դիմադրել։ Սակայն այդ որոշմանը ենթարկվում են 4231 մարդ, մնացած 2080-ը Բիթիասի քարոզիչ Նոխուտյանի գլխավորությամբ բռնում է տարագրության ճամփան և կոտորվում։

1915 թ. հուլիսի 31-ից սուեդահայերը սկսում են բարձրանալ Մուսա լեռ՝ տանելով իրենց հետ այն ամենը, ինչ կարող էին։ Մինչև օգոստոսի 3-ը նրանք ավարտելով իրենց դաղթը, հաստատվում են Թաթար Ալանկ լեռնահովտում։ Նրանց ընտրած Ազգային խորհրդի կազմում մտան Եսայի Յաղուբյանը, Պետրոս Դմլաքյանը, Պետրոս Գալուստյանը, Մարտիրոս Ճանազյանը և Հակոբ Գարագոզյանը, նախագահ ընտրվեց Եսայի Յաղուբյանը, իսկ տեղակալ՝ Պետրոս Դմլաքյանը։

Մուսալեռցիները դեռ չէին ավարտել իրենց դասավորությունը, երբ օգոստոսի 7-ին թշնամին շարժվեց դեպի նրանց դիրքերը։ Սկսվեց ահեղ կռիվ, որը տևեց վեց ժամ։ Հայերը թուրքերին տվեցին արժանի հակահարված և հետ շպրտեցին։ Օգոստոսի 9-ին Սուեդիայի գավառապետը նամակ է ուղարկում մուսալեռցիներին, առաջարկելով հանձնվել։ Պատասխան չստանալով, օգոստոսի 10-ին թուրքերը՝ շուրջ 2000 զինվորներով և թնդանոթներով անցնում են նոր հարձակման։ Կռիվը տևում է 12 ժամ։ Դիրքերը ձեռքից-ձեռք են անցնում։ Որոշ կետերում թշնամին նեղում է ապըստամբներին և գրավում առաջին բնակիչը։ Վիրավորվում է Հակոբ Գարագոզյանը։ Երբ զինակիցները նրան ուզում են տանել անվտանգ տեղ, պահանջում է. «Կաղաչեմ, ինձմով մի զբաղվիք։ Ես արդեն ինչ որ պիտի ըլլամ, եղած եմ. դուք գացեք և թշնամին դիմադրեցեք։ Մանավանդ մի տարակուսիք վերջնական հաղթանակի վրա։ Մերը պիտի ըլլա»[9]։

Օգոստոսի 19-ին թշնամին ձեռնարկում է նոր հարձակում՝ ունենալով այս անգամ 3000 կանոնավոր զինվոր և 4000—5000 խաժամուժ։ Օգտագործելով թանձր մառախուղը, նա գրավում է հայկական որոշ դիրքեր, բայց մուսալեռցիներն արիաբար պաշտպանվում են և, անսպասելի հար-

ձակվելով հակառակորդի կենտրոնական դիրքերի վրա, խուճապի մատնում նրան։ Կռիվը տևում է 14 ժամ և ավարտվում հայերի հաղթանակով։

Տեսնելով, որ դեմ առ դեմ չեն կարողանում հաղթել հայերին, թուրքերը որոշում են շրջափակել նրանց, զրկելով պարենամթերքի ու ռազմամթերքի աղբյուրներից։ Հակառակորդն ուզում է սովի մատնել հայերին, ծնկի բերել և ոչնչացնել նրանց։ Սակայն վերջիններս մնում են անդրդվելի։ Ինքնապաշտպանները վերցնում են երկու լայնատարած սավաններ, մեկի վրա գրում. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցեք», իսկ մյուսի վրա նկարում են մեծ խաչ։ Դրանք ամրացնում են «երկու բարձրագիր ծովահայաց բլուրների վրա», կողքին վառում խարույկներ և նշանակում պահակներ, որ, եթե Անատոլի նավերն անցնեն՝ օգնություն հասնեն։ 1915 թ. սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Կիշլեն» ռազմանավը, նկատելով խարույկը, մոտենում է Մուսա լեռան ափերին ու խարիսխ գցում։ Ապա մակույկ է ուղարկում ու վերցնում պահակներին, որոնք բարձրանալով նավ՝ պատմում են իրենց ծանր վիճակի մասին և օգնություն խնդրում։

Սեպտեմբերի 10-ին երևում են ֆրանսիական ռազմանավերը և սկսում ռմբակոծել թուրքերի դիրքերը։ Իսկ սեպտեմբերի 14-ին ֆրանսիական «Ժաննա դը Արկ» շոգենավը անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ, մոտենում է մուսալեռցիներին և վերցնելով բոլորին, տեղափոխում Պորտ Սայիդ։ Այդպիսով, թուրքական վանդալիզմից փրկվում են ավելի քան 4000 հայ։

Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերում հայերից, իհարկե, եղան զոհեր, որոնց թվում էին նաև պաշտպանության ակտիվ կազմակերպիչներ։ Սակայն պաշտպանության ղեկավարներին՝ Եսայի Յաղուբյանին ու Պետրոս Դմլաքյանին բախտ է վիճակվում ողջ մնալ և, դեգերելով օտար երկինքների տակ, վերջապես ապաստանել Խորհրդային Հայաստանում, մասնակցել իրենց հայրենիքի վերակառուցմանը։ Նրանց անունը հանգչում է հայրենի հողում։

Մուսա լեռան հերոսամարտը նկարագրված է ավստրիացի անվանի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հռչակավոր վեպում, որը թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով։

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում՝ Բյուրիքում (Շապին Գարահիսարի գավառ), Սինջարում (Դիարբեքիրի վիլայեթ), Զեյթունում, Ֆրնաբճաղում, Կիշլեֆիլում, Բերեկոյում (Ադանայի վիլայեթ), Դուվաթ Շափայում (Տրապիզոնի վիլայեթ), Պարտիզակում, Ագ-Տաղում և այլ տեղերում։ Հայերը, որքան էլ կռվում էին արիաբար, որոշ դեպքերում ցուցարերում նույնիսկ տեսական դիմադրություն, այնուամենայնիվ, թշնամու գերազանց ուժերի առաջ հարկադրված էին տեղի տալ։

Երիտթուրքական ոճրագործների դեմ հայ ժողովրդի մղված կռիվներից ամենանշանավորը, սակայն, Սարդարապատի ճակատամարտն էր։ Տեղահանելով ու բնաջնջելով արևմտահայերին, նրանք ձգտում էին նույն բախտին արժանացնել նաև արևելահայերին։ Ուստի, գրավելով Էրզրումը, Կարսը և Ալեքսանդրապոլը, թուրքական զորքերը ուղղություն վերցրին դեպի Երևան և 1918 թ. մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղը։

Արևելահայության գլխին կախվեց ահավոր վտանգ։ Եվ նա դուրս եկավ օրհասական պայքարի։ Պատերազմը ընդունեց համազգային բնույթ, իր մեջ ընդգրկելով հասարակության բոլոր խավերին, առանց որևէ խտրականության։ Պայքարի ավանդարդում կանգնեցին ռազմական փայլուն կրթություն ստացած, պատերազմի բովում կոփված, տեսական գիտելիքների հետ փորձ ձեռք բերած մարդիկ։ Հարկ է նշել զեներալներ Թովմաս Նազարբեկյանին, Մովսես Սիլիկյանին, գնդապետներ Դանիել-Բեկ-Փիրումյանին, Պավել Փիրումյանին, Կ. Հասան Փաշայանին, Մորելիին, Մխիթարյանին, Սալիբեկյանին, Կորոլկովին, Պերեկրյուսովին, Դոլուխանյանին, Սիլինին, կապիտաններ Աթանասյանին, Սակելյարին և ուրիշների։

Սարդարապատի ճակատամարտում արիաբար կռվում էին նաև բազմաթիվ արևմտահայեր, որոնք, փրկվելով Թուրքական յաթաղանից, անցել էին Արևելյան Հայաստան և համալրել իրենց եղբայրների զինվորական միավորումներն ու աշխարհազորը։ Երկրի ընդհանուր կյանքը ղեկավարում էր դաշնակցության հայտնի գործիչ Թուրքական բռնապետության դեմ պայքարի մեծ փորձ ունեցող, Վանի 1915 թ. հերոսամարտը ղեկավարող, ապա Վանի նահանգապետ, իսկ 1918 թ. մարտին Երևանի տարբեր խավերի կողմից դիկտատոր ընտրված Արամ Մանուկյանը։

Գեներալ Թ. Նազարբեկյանը, իր շտաբով գտնվելով Ղարաքիլիսայում, կարգադրեց այդ օրերին Երևանում գտնվող հայկական 2-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Մ. Սիլիկյանին Էջմիածնի շրջանում կենտրոնացնել անհրաժեշտ ուժեր և կանխել Թուրքերի առաջխաղացումը դեպի Երևան։ Սիլիկյանը մշակեց ռազմական գործողությունների ճիշտ պլան, մատնանշելով զինվորական ու աշխարհազորային յուրաքանչյուր միավորման անելիքը[10]։

Շուտով Պավել Փիրումյանը իր գունդը (5-րդ) անվանեց «Մահապարտների գունդ»՝ երդվելով կյանքի գնով փրկել մայր հողը, արժանի հակահարված տալ Թուրքերին, ջախջախել ու դուրս վռնդել նրանց հայրենիքի սահմաններից։ Թշնամու դեմ պիտի դուրս գար անգամ Գևորգ 5-րդը։ Երբ Մ. Սիլիկյանը խորհուրդ է տալիս նրան տեղափոխվել առավել անվտանգ վայր՝ Սևան, կաթողիկոսը պատասխանում է. «Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ այդ, հոգ չէ, թե կզոհվեմ հարազատ Մայր տաճարի շեմին»[11]։

Սարդարապատի գրավումից հետո Թուրքական զորամասերը Յաղուբ Շեքի փաշայի գլխավորությամբ ուղղություն են վերցնում դեպի Երևան։ Սակայն հանդիպում են հայկական միավորումների համառ դիմադրություն, որոնք հարվածում են Թուրքերին ճակատից, թիկունքից՝ պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ։ Թշշ-

նամին սատանում է համալրումներ, բայց դա չի օգնում նրան։

1918 թ. մայիսի 24-ին գեներալ Մ. Սիլիկյանը դիմում է ժողովրդին. «Հայեր, շտապեցեք հայրենիքն ազատելու։ Հասել է բոպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար... Հայեր, ժամանակը չի դանդաղելու։ Բոլորը պարտական են զենքի տակ դալու։ Ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զենքով հայրենիքի պաշտպանության համար...։

Հանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական գոյության, հանուն ոտնակոխ եղած ճշմարտության, ոտքի կանգնեցեք, դեպի գործ, դեպի սրբազան պատերազմ»[12]։

Գեներալի այդ կոչն ավելի ոգևորեց հայ տղամարդկանց ու կանանց, որոնք ռազմադաշտում ու թիկունքում կատարեցին նոր սխրագործություններ։ Նրանք թուրքերին հասցրեցին հարված հարվածի հետևից և ստիպեցին բռնել հետդարձի ճամփան՝ նահանջելով դեպի Ալեքսանդրապոլ։ Սակայն, տեսնելով, որ հայերն իրենց չեն հետապնդում, թշնամին ուժերը վերադասավորելով, նոր հարձակման է անցնում։ Արաքս կայարանում վերստին ծավալվում են կատաղի մարտերը, որոնք կրկին ավարտվում են հայերի հաղթանակով։ Թուրքերը թեպետ դիմադրության փորձեր են անում, սակայն անհաջող։ Հայերի հուժկու հարվածների տակ նրանք փախչում են դեպի Ալեքսանդրապոլ։ Սիլիկյանը որոշում է շարունակել թշնամու հետապնդումը և ազատագրել նաև Ալեքսանդրապոլը, սակայն գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանը, դեկավարվելով դաշնակցության ներկայացուցիչների պահանջով, որոնք Բաթումում պայմանագիր էին կնքում թուրքերի հետ, կարգադրում է նրան դադարեցնել պատերազմական գործողությունները։

Այդպիսով, Սարդարապատի ճակատամարտը, որ սկսվեց 1918 թ. մայիսի 22-ին, ավարտվեց մայիսի 29-ին հայերի հաղթանակով։ Անչափ մեծ է այդ հաղթանակի նշանա-

կությունը. այն փրկեց արևելահայերին բնաջնջումից և իրական պայմաններ ստեղծեց նրանց պետականության վերականգնման ու անկախության հռչակման համար։ Սարդարապատի հաղթանակը, կոտրելով թուրքերի հարձակման թափը, կանգնեցրեց նրանց ներխուժումը Վրաստան ու Թիֆլիս։

Սարդարապատի ահեղ կռիվների ընթացքում երիտթուրքական հրամանատարությունը որոշում է ընդունում իր դիվիզիաներից մեկը շարժել Բաշ Ապարան, գրավել Երևանը, ապա թիկունքից հարվածել Սարդարապատի պաշտպաններին։ Նրա զորամասերը 1918 թ. մայիսի 23-ին էսատ փաշայի գլխավորությամբ արագորեն գործի են անցնում և գրավում Բաշ Ապարանը։ Իմանալով այդ մասին, գեներալ Մ. Սիլիկյանը Ապարան է ուղարկում հայկական զորամիավորումներ Դրոյի (Դրաստամատ Կանայան) ղեկավարությամբ և աշխարհազորայիններ։ Թուրքերի դեմ պայքարի են ելնում նաև եզդիները՝ Ջահանգիր աղայի գլխավորությամբ։ Մարտերը, ինչպես Սարդարապատում, այնպես էլ Բաշ Ապարանում, ընդունում են կատաղի բնույթ։ Ի վերջո մայիսի 29-ին թշնամին գլխովին ջախջախվում է և փախչում դեպի Ալեքսանդրապոլ։ Բաթումում դաշնակցականների կնքած պայմանագիրը թուրքերի հետ կանխում է հայկական ուժերի առաջխաղացումը։ Եվ նրանք նույն օրը դադարեցնում են ռազմական գործողությունները։

1918 թ. մայիսի վերջերին կատաղի կռիվներ տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայում։ Մայիսի 20-ին թուրքերը գրավեցին Ջաջուռը, իսկ 21-ին՝ Վարանցովկա և այլ գյուղեր։ Գեներալ Արեշովը չկարողացավ պաշտպանել Ջաջուռի լեռնանցքը և նահանջեց դեպի Ղարաքիլիսա։ Քաղաքը փաստորեն մնաց անպաշտպան։ Բնակիչները փորձեցին հաշտություն կնքել, բայց Արջուտ գյուղի մահմեդականները հեղնանքով ու ջարդի սպառնալիքով ընդունեցին նրանց պատգամավորներին։ Վերջիններս վերադարձան և ասացին թուրքերին[13]։ Սակայն թուրքերը չհավատացին, կասկածե-

լով, որ հայերը Ղարաբիլիսայում ծուղակ են պատրաստել իրենց համար։

Շուտով Սարդարապատի հաղթանակի լուրը հասավ Ղարաբիլիսա և կյանքի ու նոր պայքարի կոչեց նրա բնակիչներին։ Մայիսի 23-ին նրանք Մեսրոպ Տեր-Մովսիսյանի ու Համազասպի ղեկավարությամբ հավաքվեցին հանրաժողովի և որոշեցին շարունակել դատամարտը։ Ժողովրդական այդ շարժումը գլխավորելու համար Դիլիջանից Ղարաբիլիսա եկան գեներալ Նազարբեկյանը, գնդապետներ Սամարցյանը, Բեյ-Մամիկոնյանը, Վիլինսկին և ուրիշներ։

Մայիսի 24-ին Թ. Նազարբեկյանը դիմեց ժողովրդին հետևյալ կոչով՝ «Հայեր, ծանր փորձություն է ապրում մեր ժողովուրդը։ Թուրքական բազմապարյան ստրկությունից հետո՝ մեր ժողովուրդը հասկացավ, որ այսպես շարունակել նա այլևս չի կարող և վճռեց՝ կամ զենքը ձեռքին նվաճել իր ազատությունը ու սահեղծել իրեն համար երջանիկ ապագա, կամ պատվով մեռնել։

Լավ գիտեցեք, որ եթե այժմ զենքով չկարողացանք պաշտպանել մեր ազատությունն ու ստացվածքը, ապա մենք արժանի չենք գոյություն ունենալու որպես ինքնուրույն ազգ և այն ժամանակ վայ մեզ ու մեր հետնորդներին։ Մեր որդիներն ու թոռները միմիայն անեծքով կհիշեն մեզ»[14]։

Այնուհետև Նազարբեկյանը դասավորում է հայկական ուժերը, հանձնարարելով յուրաքանչյուրին նրա անելիքը։ Մայիսի 25-ին սկսվում է կռիվը և ավարտվում հայերի հաղթանակով։ Թշնամին հահանջում է տալով մեծ կորուստներ։ Սակայն, ստանալով համայրումներ, նա նոր հարձակում է ձեռնարկում։ Հայերը դիմադրավում են՝ արմրակոծելով հակառակորդի դիրքերը։ Ճակատամարտը դառնում է ավելի ու ավելի կատաղի, թուրքերը ձգտում են նվաճել նոր դիրքեր, բայց դա նրանց չի հաջողվում։ Գոյամարտի երկրորդ օրը նույնպես ավարտվում է հայերի հաղթանակով։ Քաջության անդնահատելի օրինակներ են դրսևորում կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, գնդապետ

Հովսեփ Սամարջյանը, գնդապետ Ղորղանյանը, Հովսեփյանը և ուրիշներ։ Հերոսի մահով զոհվում է Գուրգեն Տեր-Մովսիսյանը։

Սակայն մայիսի 27-ին թուրքերը, ստանալով մեծ համալրումներ, նոր հարձակման են անցնում, որին հայերը չեն կարողանում դիմադրել։ Հայկական զորամասերն օգնություն չեն ստանում, սկսում են գործել անկազմակերպ, ռազմամթերքի մեծ կարիք են զգում։ Թուրքերը ներխուժում են Ղարաբիլիսա։ Նրանց հրամանատար Ջևիդ փաշան թեև խոստանում է պահպանել կարգ ու կանոն, բնակիչների կյանքն ու ունեցվածքը, սակայն թուրք ասկյարներն սկսում են անխնա սպանել ու թալանել հայերին, անարգել ու խոշտանգել նրանց։ Դահիճները սրատում ու գնդակահարում են հազարավոր հայ զինվորների ու խաղաղ բնակիչների։ Նույն բախտին են արժանանում նաև շրջակա Ղշլաղի, Հաջի Ղարանի, Բլովդալի ու Վարդանլիի բնակիչները։

Թուրքերի հաղթանակը Ղարաբիլիսայում պայմանավորված էր ամենից առաջ թվական գերակշռությամբ։ Նրանք ունեին շուրջ 10 հազար զինվոր ու 40 գնդացիր, մինչդեռ հայերը՝ 7 հազար զինվոր ու 20 գնդացիր։ Դաշնակցության պատվիրակությունը, բարձրանալ երիտթուրքերի հետ վարելով հաշտության բանակցություններ, իր զիջողական գործունեությամբ խանգարում էր հայոց դիմադրությանը թշնամուն, իսկ հաճախ նաև կազմալուծում այն։

Սակայն հայ զինվորները, ինչպես Սարդարապատում ու Բաշ Ապարանում, այնպես էլ Ղարաբիլիսայում, դրսևորեցին քաջություն ու հայրենասիրություն, կատարելով սրխրագործություններ և հաճախ պարտության մատնելով ու ջախջախելով ուժեղ թշնամուն։ Մարշալ Հ. Բաղրամյանը իր հուշերում մեջբերում էր թուրքական զորավար Վահիբ փաշայի այն խոսքերը, թե «Ղարաբիլիսայի տակ հայերը ցույց են տվել, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[15]։

Դժվար է ստույգ պատասխանել այն հարցին, թե որքան էր կռվող կողմերի զոհերի թվաքանակը։ Պատմագիտա-

կան դրականության մեջ այն կարծիքը կա, որ Թուրքերի կորուստները միայն Սարդարապատում կազմում էին 3500, իսկ հայերինը միայն Ղարաքիլիսայում՝ 8000 մարդ։ Հնարավոր է, որ այդ տվյալները մոտ են իրականությանը։ Պատերազմը տեղի էր ունենում հայկական հողի վրա, և բնական է, որ հայերի կորուստները մեծ կլիներին։

Համենայնդեպս հայ ժողովրդի պայքարն իզուր չանցավ։ Հայաստանը թեև մնաց փոքրածավալ (շուրջ 10000 քառ. կմ), այնուամենայնիվ պահպանեց իր գոյությունը, իսկ հետագայում, բարենպաստ պայմանների հետևանքով, ընդարձակվեց, միակցելով իրեն իր պատմական մի շարք տարածությունները։

Արևմտահայերի դիմադրողական կռիվները շարունակվեցին նաև առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ հատկապես Կիլիկիայում։ Հրապուրվելով Անգլիայի ու Ֆրանսիայի տված հայանպաստ խոստումներով, նրանցից շատերը մտան դեռ պատերազմի տարիներին Պաղեստինում կազմված այդ տերությունների Արևելյան լեգիոնի մեջ և արիաբար կռվեցին Թուրքերի դեմ։ Սակայն հետագայում այդ պետությունները, մերձենալով Թուրքիային ու կնքելով նրա հետ իրենց համար շահավետ պայմանագրեր, լքեցին հայերին, թողնելով նրանց բախտի կամքին[16]։ Իսկ Թուրքիայի նոր կառավարիչները՝ քեմալականները, օգտագործելով այդ հանգամանքը, շարունակեցին հայերի կոտորածները Կիլիկիայում, ուր պատերազմից հետո վերադարձել էին բազմահազար հայեր և սկսել էին վերակառուցել ու վերանորոգել իրենց ավերված գյուղերն ու քաղաքները։ 1920 թ. հունվարին քեմալականները հարձակվեցին Մարաշի վրա։ Մարաշցիները փորձեցին զենք վերցնել հեռացող ֆրանսիացիներից և դիմել ինքնապաշտպանության, սակայն վերջիններս իրենց զենքերը հանձնեցին Թուրքերին։ Այնուամենայնիվ մարաշցիները Մուսա լեռան գոյամարտի հրաշակավոր զեկավարներից մեկի՝ Պետրոս Տմլաքյանի գլխավորությամբ հավաքեցին իրենց ուժերը և դիմադրավեցին

Թշնամուն։ Բայց պարտվեցին։ Տմլաքյանը հերոսաբար զոհ-
վեց, ընկան նաև շատերը։

1920 թ. մարտին քեմալականները փորձեցին սրի քա-
շել նաև Հաճընում վերահաստատված 6000 հայերի։ Հաճըն-
ցիները Սարգիս Ճեպեճյանի գլխավորությամբ դիմեցին
ինքնապաշտպանության։ Թշնամին ամիսներ շարունակ չը-
կարողացավ կոտրել նրանց դիմադրությունը։ Հաճընցիների
ուժերը գնալով թուլանում էին։ Նրանք դիմում են ֆրանսիա-
ցիների օգնությանը, բայց սրանք, կնքելով Թուրքիայի հետ
բարեկամական պայմանագիր, մերժում են։ Հաճընցիները
դիմում են քաղաքակիրթ աշխարհին, սակայն ապարդյուն։
Ապավինելով սեփական ուժերին, նրանք արիաբար շարու-
նակում են գոյապայքարը։ Բայց հոկտեմբերին քեմալական-
ները մեծ զորամիավորումներով ներխուժում են Հաճըն և
սրի քաշում բոլորին։ Նրանք Սարգիս Ճեպեճյանին ձերբա-
կալում են, իսկ հետո գլխատում։

Ինքնապաշտպանական մարտերի պատմության մեջ
փայլուն էջեր գրեցին նաև Այնթապի հայերը, որոնց թիվը
1919 թ. կազմում էր 17000 մարդ։ Իմանալով Մարաշի կո-
տորածների լուրը, նրանք Ներսես քահանա Թավուճյանի,
Ատուր Լևոնյանի և Ավետիս Գալեմքարյանի գլխավորու-
թյամբ ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության։ 1920 թ.
ապրիլի 1-ին քեմալականներն անցան հարձակման։ Բայց
այնթապցիները հետ շպրտեցին նրանց։ Թշնամու դեմ
դուրս եկան բոլոր խավերի, կուսակցությունների, տարի-
քի ու սեռի մարդիկ, գործելով «Մահ, կամ ազատություն»,
«Պատվավոր մահը պարծանք է, անպատիվ փրկությունը՝
ստորություն» նշանաբաններով։ Այնթապցիների գոյապայ-
քարը տևեց 1920 թ. ապրիլի 1-ից մինչև 1921 թ. փետրը-
վարի 8-ը, սակայն թշնամին հաղթեց և դաժան դատաստան
տեսավ նրանց հետ։

Ինքնապաշտպանական մարտերը հայ ժողովրդի պատ-
մության փառապանծ դրվագներից են։ Նրանք ցույց տվեցին
մեր ժողովրդի կենսունակությունը, թշնամու դեմ մաքառե-

լու պատրաստակամությունը և հարատևելու կամքը։ Այդ մարտերն ապացուցեցին, որ հայերը, երբ դիմադրում էին թշնամուն, ավելի քիչ էին կոտորվում, քան այն ժամանակ, երբ հանձնվում էին նրա ողորմածությանը։

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ցեղասպանությունը ծանր նստեց հայ ժողովրդի վրա։ Նա զրկվեց իր հայրենիքի տարածքի շուրջ 90 տոկոսից և ունեցավ նյութական հսկայական կորուստներ. արևմտահայերը՝ 14.598.460 հազար, իսկ արևելահայերը՝ 4.352.472 հազար, ընդամենը՝ 19.130.932 հազար ֆրանկ[1]։ Հափշտակվեցին կամ հրկիզվեցին ու ավերվեցին հայ մարդկանց տքնաջան աշխատանքով կառուցած տներ, ճարտարապետական հին ու նոր հուշարձաններ։ Անդառնալիորեն ոչնչացվեցին ձեռագրեր, որոնք անգնահատելի տեղեկություններ էին պարունակում հայ և այլ ժողովուրդների մասին։

Հայ ժողովուրդը ունեցավ մարդկային մեծ կորուստներ։ Իթթիհատական եղեռնագործները առաջին աշխարհամարտի նախօրյակին Թուրքիայում եղած ավելի քան 2.500 հազարից կոտորեցին ըստ որոշ հեղինակների՝ 1 միլիոն, ըստ այլոց՝ 1,5 միլիոն, նույնիսկ՝ 2 միլիոն։ Աղբյուրներին մոտիկից ծանոթությունը հիմք է տալիս հաստատելու, որ այդ տվյալներից ավելի հավանականը 1,5 միլիոնն է։

Դահիճները սրի քաշեցին ու կայսրությունից վտարեցին բազմահազար հայ գյուղացիների, արհեստավորների, առևտրականների, մտավորականների, այդ թվում՝ այնպիսի նշանավոր մասնագետների, որոնք ճանաչված էին Թուրքիայում, լուրջ դեր էին խաղում նրա ժողովրդական տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքում։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին աշխարհում հաշվվում էր 4,5—5 միլիոն հայ, որը համադրելով արևմտահայերի վերոհիշյալ կորուստների թվաքանակին, այսինքն՝ 1,5 միլիոնին, ստացվում է 30—33 տոկոս։ Եթե հաշվի առնենք, որ պատերազմի տարիներին Թուրքական

հորդանները Անգլիկովկաս ներխուժելիս սրի քաշեցին նաև արևելահայության մի մասին, այդ տոկոսը կարող է հասնել 35-ի։ Անմեղ ժողովուրդը կորցրեց իր ընդհանուր թվաքանակի ավելի քան 1/3-ը, մինչդեռ պատերազմի հանցագործ պետությունները՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան՝ 1—8 տոկոսը։

1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթ փաշան հայտարարեց, որ ինքն ու իր գործընկերները Հայկական հարցը լուծեցին երեք ամսում, ինչը Սուլթան Համիդ 2-րդին չէր հաջողվում 30 տարվա ընթացքում։ Դա լիակատար ճշմարտություն էր։

1927 թ. Արևմտյան Հայաստանում հաշվվում էր 4195 հայ, որոնք ընակվում էին Բիթլիսում, Դիարբեքիրում, Խարբերդում և այլ քաղաքներում[2]։

Հայ ժողովրդական վրիժառուներն արժանին հատուցեցին Թուրքիայից փախած և Եվրոպայի տարբեր երկրներում թաքնված Թալեաթին ու նրա ոճրագործ զինակիցներին։ 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանը սպանեց Թալեաթին, նույն թվականի դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանը՝ Սաիդ Հալիմին, 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը՝ Բեհաեդդին Շաքիրին և Ջեմալ Ազրմին, 1922 թ. հուլիսի 25-ին Թբիլիսում Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը՝ Ջեմալին։ Էնվերը կարողացավ ծլկել Բեռլինից Միջին Ասիա և, անցնելով բասմաչների գլուխ, փորձեց իրագործել իր պանթուրանական ցնորամիտ երազանքները, բայց 1921 թ. պարտություն կրելով խորհրդային բանակի դեմ վարած կռիվներում, Աֆղանստան փախչելու ճանապարհին ընկավ կարմիր զինվորների գնդակից։ Ուշագրավ է, որ 1921 թ. հունիսի 2—3-ին Բեռլինում, երբ տեղի ունեցավ Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը, կատարվեց դատավարությունների միջազգային պատմության մեջ աննախադեպը, Ա. Վեգների խոսքերով ասած. «Փաստերի ծանրության տակ տառապող ու լռակյաց զոհը ակամայից դարձավ մեղադրող և մեղադրյալի աթոռին այլևս չկա Թեհլիր-

յանը, այլ կա արյունռուշտ ննջեցյալի սովերը, այնպիսի խորհրդավոր իրավիճակի խորիմաստ հաստատում, երբ մեղավոր է ոչ թե սպանողը, այլ սպանվածը»[3]։ Դատարանը ազատ արձակեց Ս. Թեհլիրյանին։

Արևմտահայության շուրջ 1 միլիոն ողջ մնացած բեկորները տարագրվեցին իրենց հայրենիքից աշխարհի տարբեր երկրներ։ Դրա հետևանքով առաջացավ Հայկական սփյուռքը։ Այդ բեկորները նոր պայմաններում կրեցին սոցիալ-հոգեբանական լուրջ փոփոխություններ։ Գյուղացիները հարկադրված եղան թողնել իրենց պապենական երկրագործությունը և զբաղվել արհեստագործությամբ, առևտրով կամ բանվորությամբ, վարձվելով սովորաբար ծանր ու ցածր վճարվող աշխատանքներում։ Իսկ քաղաքացիները հնարավորության սահմաններում շարունակեցին զբաղվել իրենց արհեստներով, հարստացնելով տեղական արդյունաբերությունը նոր ճյուղերով։ Նրանց աշխատանքի արդյունքները հաջողությամբ իրացվում էին նոր սպառողների կողմից։

Տարագիրները կանգնեցին նաև ուծացման փաստի առաջ։ Նրանցից շատերը հարկադրված էին թողնել մայրենի լեզուն և խոսել հյուրընկալ երկրի լեզվով։ Իսկ Թուրքիայում մնացած հայերը, վախենալով կոտորածների սարսափներից, պետք է մոռանային հայերենը և խոսեին թուրքերեն, պետք է թողնեին ազգային վարքն ու բարքերը, քրիստոնեությունը և ընդունեին մահմեդականություն։

Սակայն տարագրված հայության մեծ մասը, պահպանելով մայրենի լեզուն և ազգային սովորույթները, շարունակում էր հուսալ, թե մեծ տերությունները երբեք կլուծեն Արևմտյան Հայաստանի հարցը և իրենց հնարավորություն կտան վերադառնալու հայրենիք։ Սփյուռքահայության բախտն իրենց ձեռքերում վերցրեցին հայ հոգևորականներն ու ազգային կուսակցությունները։ Նրանք մայրենի լեզուն պահպանելու և հայրենիքը չմոռանալու համար հիմնեցին հայկական դպրոցներ ու մշակութային-կրթական այլ հաստատություններ, հրապարակեցին հայրենի երկրամասերի մասին հուշագրություններ և ուսումնասիրություններ, հա-

վաքեցին ու լույս ընծայեցին բազմաթիվ փաստաթղթեր Հայկական հարցի վերաբերյալ՝ նպատակ ունենալով ներկայացնել դրանք միջազգային հասարակայնությանը և պահանջել հարցի արդար լուծում։ Ազգային այդ հաստատությունները գործնական կապեր հիմնեցին խորհրդային Հայաստանի հետ, և 1921 թ. ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)։ Այն գոյատևեց մինչև 1937 թ. և լուծարվեց ստալինյան բռնությունների սաստկացման հետևանքով։

Սփյուռքահայ կուսակցությունները շարունակեցին զբաղվել հայկական դատով, փորձելով նրա լուծումը կապել մեծ տերությունների հայանպաստ քաղաքականության կամ համաշխարհային դեմոկրատական շարժումների հետ։ Զանազան առիթներով նրանք դիմեցին այդ տերություններին և միջազգային կազմակերպություններին, սակայն ապարդյուն։

Սփյուռքի հայ երիտասարդության մի մասը եկավ այն եզրակացության, որ քաղաքական եղանակով անհնար է լուծել հայկական հարցը, անհրաժեշտ է դիմել ավելի գործուն միջոցների, այն է՝ ահաբեկել Թուրքիայի արտաստմանյան դիվանագիտական ծառայողներին և հասկացնել այդ երկրի ու մյուս տերությունների ղեկավարներին, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր հարցը, որ այն պետք է անհապաղ լուծել։ 1973 թ. ստեղծվեց «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» (ՀԱՀԳԲ) կազմակերպությունը, որը կատարեց ահաբեկչական գործողություններ, սպանեց արտաստմանյան երկրներում մի շարք թուրք դիվանագետների ու պաշտոնական անձանց, զոհվեցին նաև ահաբեկիչներից ոմանք։ 1984 թ. ՀԱՀԳԲ-ն դադարեցրեց իր ահաբեկչական գործողությունները։

Հայաստանի անկախության հռչակումից հետո հայրենիքում ստեղծված ազգային կուսակցությունները հայտարարեցին իրենց տեսակետները Հայկական դատի մասին։ Դաշնակցականները պահանջում են համախմբել բոլոր հայերին իրենց հայրենի ամբողջական հողերի վրա՝ ստեղծելով

միացյալ ու մեկ հայություն, միացյալ ու մեկ Հայաստան[4]։ Հնչակյանները դնում են, որ պետք է ազատագրել հայոց պատմական հողերը, համախմբել դրանք Հայաստանի Հանրապետության շուրջը և մոտ ապագայում ստեղծել «Համահայկական-միասնական ազատ ու անկախ պետականություն՝ Հայաստան պետություն»[5]։ Ռամկավար-ազատական կուսակցության նպատակն է՝ «պաշտպանել հայ դատը՝ հետապնդելով հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը», հասնել հայ ժողովրդի «պատմական հայրենիքի ազատագրությանը...»[6]։ Հայաստանի կոմկուսի ծրագրի գլխավոր խնդիրներից մեկն է «...Թուրքական կառավարության կողմից իրագործված հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը...»։ Այն պայքարում է «Հայկական հարցի արդարացի լուծման համար...»[7]։ Հայոց համազգային շարժման ծրագրում հայկական հարցը դիտվում է սիյուռքահայության խնդիրների հետ կապված միայն։

Այդպիսով, հայոց ցեղասպանությունը, լինելով համազգային մեծագույն ողբերգություն, տասնամյակներ շարունակ մատնոցել է հայ հասարակայնության բոլոր խավերին։ Նրանք համառորեն պայքարել են, պայքարում են և կպայքարեն հայկական դատի լուծման համար, մանավանդ, երբ այն ունի ոչ միայն ազգային, այլև համամարդկային նշանակություն։ Ոճրագործության արդարացի հատուցումը դաս կլինի այն սև ուժերի համար, որոնք կփորձեն կատարել այդ քայլը և կստիպի նրանց ազգամիջյան հակասությունները լուծել ոչ թե սրով ու արյունով, այլ քաղաքական ճանապարհով։

Ի՞նչ հետևանք ունեցավ հայոց ցեղասպանությունը Թուրքերի և Թուրքիայի համար։ Թուրքական աշխարհիկ, զինվորական և հոգևոր վերնաշերտերը, հայերին թալանելով ու կոտորելով, հարստացան։ Հարստացավ նաև խուժանը, որը, գնալով օսմանյան զորամասերի հետևից, նեռվում էր նրանց գոհերի վրա և կողոպտում։ Կարճ ժամանակամիջոցում հայոց ունեցվածքի հափշտակման ճանապարհով առաջացան նոր ազգներ ու բեգեր, որոնց անունները հոչակվե-

ցին իրենց գավառներում ու նրանց սահմաններից դուրս։ Հայերի հողերի ու շարժական գույքի բռնագրավումներով հարստացան նաև թուրք ու քուրդ բազմաթիվ գյուղացիներ։ Կիսաքոչվորներից ու քոչվորներից շատերն անցան նստակեցության, փոխարինելով իրենց թափառաշրջիկ, հնամենի վրանները հայոց հարմարավետ տներով։

Սակայն պատերազմից ու հայոց ցեղասպանությունից շահեց թուրք ու քուրդ բնակչության մի մասը, մյուսը, որոնց գյուղերը դարձան ռազմական գործողությունների թատերաբեմ, լրջորեն տուժեց։ Խնդիրն այն է, որ այդ երկրում, հատկապես նրա հայաբնակ վայրերում, հայ գյուղացիները մեծ դեր էին խաղում գյուղատնտեսության զարգացման գործում։ Նրանք հանդիսանում էին այդ բնագավառի առաջատարները։ Սրի քաշելով հայերին, թուրք ու քուրդ ջարդարարները նրանց ծաղկուն դաշտերը դարձրեցին իրենց անասունների արոտավայրեր, որի հետևանքով երկրագործությունը իջավ վաչկատունական մակարդակի։

Այդպիսին էր վիճակը նաև արդյունաբերության ճյուղում, ուր արևմտահայերը նույնպես առաջնակարգ դեր էին խաղում։ Բավական է նշել, որ 1912 թ. նրանց էր պատկանում Օսմանյան կայսրության արդյունաբերական ձեռնարկությունների 20 տոկոսը, իսկ թուրքերին՝ 15 տոկոսը։ Առևտրի ասպարեզում հայ վաճառականները 1912 թ. Թուրքիայի 215 խոշոր քաղաքներում կազմում էին բոլոր վաճառականների 22,9 տոկոսը և հույներից հետո գրավում էին երկրորդ տեղը[8]։ Հայ վաճառականները հաստատված էին կայսրության շատ քաղաքներում, հատկապես Կ. Պոլսում ու Զմյուռնիայում։ Նրանք Եվրոպայից բերում էին արդյունաբերական ապրանքներ, իսկ Թուրքիայից արտահանում գերազանցապես գյուղատնտեսական մթերքներ և նպաստում հետամնաց Օսմանյան կայսրության մերձեցմանն աշխարհի առաջավոր երկրների հետ, օգնում ու օժանդակում էին նրա առաջընթացին։ Հասկանալի է, որ իթթիհատական դահիճները, սրի քաշելով հայ արհեստավորներին ու առևտրականներին, էապես խաթարեցին այդ գործը։

Երիտթուրքական ոճրագործները բնաջնջելով արևմտահայությանը, ոչ միայն փառք ու պատիվ չբերեցին իրենց երկրին, այլև ամոթի ու խայտառակության անջնջելի գրոշմ դրեցին նրա վրա։

Անցնելով իշխանության գլուխ, Թուրքիայի նոր կառավարիչները՝ քեմալականներն, իրենց երկրի հեղինակությունը փրկելու և երիտթուրքերին հիմնավորապես մերկացնելու համար 1919 թ. փետրվարին Կ. Պոլսում կազմակերպեցին նրանց դատավարությունը՝ ներկայացնելով հայրենիքի դավաճանության, Թուրքիան պատերազմի մեջ նետելու և հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու մեղադրանքները։ Դատը վարում էր զինվորական տրիբունալը՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազիմ փաշայի նախագահությամբ։ Պրոցեսը սկսվեց 1919 թ. ապրիլի 27-ին և ավարտվեց հունիսի 26-ին։ Դատավճռում, ի թիվս այլ որոշումների, արձանագրվում էր նաև, որ երկրի մի շարք շրջաններում հայկական կոտորածները «կազմակերպվել ու ղեկավարվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից»։ Ապացուցված համարելով այդ կուսակցության պարագլուխների հանցագործությունները, դատարանը միաձայն վճռում է Թուրքիայի կառավարության նախկին վարչապետ Սաիդ Հալիմին, ներքին գործերի նախարար Թալեաթին, ռազմական գործերի նախարար Էնվերին, ծովային նախարար Ջեմալին, իթթիհատի գլխավոր քարտուղար և լուսավորության նախարար Նազիմին, երիտթուրքական կենտկոմի անդամ «Թեշքիլաթը մահսուսեի» նախագահ Բեհհաեդդին Շաքիրին, Տրապիզոնի վիլայեթի կուսակալ Ջեմալ Ազմին և այլոց, հեռակա կարգով ենթարկել մահապատժի, իսկ մյուս եղեռնագործներին՝ տարբեր ժամկետների բանտարկության[9]։ Քեմալականները, թեև դատապարտեցին երիտթուրքերի կողմից կազմակերպած հայոց կոտորածները, սակայն շուտով իրենք, ինչպես ասվեց, իրագործեցին նոր ջարդեր Կիլիկիայում ու Թուրքիայի այլ վայրերում։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայերի ցեղասպանության հարցում մեծ տերությունների և մասնավորապես եվրոպական տերությունների դիրքորոշումը բնութագրվում է որպես թուրքական կառավարողների գործողությունների թողտվության և չմիջամտելու քաղաքականություն։ Յո. Լեպսիուսի դիպուկ բնորոշմամբ «Հայկական հարցը բնածին տունկ չէ։ Այն եվրոպական դիվանագիտության պտուղն է... դիվանագիտական շախմատային խաղում... հայը հանդիսացել է զինվոր, որին մերթ առաջ են մղել, մերթ զոհաբերել։ Մարդասիրության պատճառաբանություններն ու «քրիստոնեական հովանավորությունը» միայն դիմակ էին»[1]։

Բոլոր տերությունների շարքում հայերի ցեղասպանության գլխավոր մեղսակիցը կայզերական Գերմանիան էր։ Կայզերական Գերմանիայի դիրքորոշումը Հայաստանի և հայության նկատմամբ բացահայտորեն շարադրված է արտաքին գործերի նախարար Ա. Յիմմերմանի հետևյալ հայտարարության մեջ. «Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային։ Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա շահերին...»[2]։ Գերմանական կառավարողների նման դիրքորոշմամբ էլ պայմանավորված էր նրանց վարքագիծը հայերի ցեղասպանության նկատմամբ։

Գերմանացի հայտնի արևելագետ Յո. Մարկվարտը իրավացիորեն նշել է, որ հայերի ցեղասպանության հարցում «առավել ծանր է Ռայխստագի պատասխանատվությունը»[3]։ Հայերի ցեղասպանության դատապարտմանն ու կայզերական Գերմանիայի մեղսակցությանն է նվիրված Յո. Լեպսիուսի մեծածավալ աշխատությունը՝ «Գերմանիան և Հայաստանը»[4], որտեղ զետեղված է շուրջ 500 դիվանագիտական փաստաթուղթ։ Բացի դրանից, մեկ ուրիշ աշխատության մեջ Յո. Լեպսիուսը, դիմելով կայզերական Գերմանիայի կառավարիչներին, մեղադրելով նրանց հայերի ցեղա-

սպանության մեղսակցության մեջ, հայտարարում էր. «Եթե դուք մեղավոր չեք, ապա ապացուցեք, որ մեղավոր չեք»[3]։

1916 թվականի հունվարի 27-ին Կառլ Լիբկնեխտը ի լուր աշխարհի հայտարարեց. «Թուրքական կառավարությունը կազմակերպեց հայերի սարսափելի ջարդերը։ Ամբողջ աշխարհը գիտե այդ մասին և դրա համար մեղադրվում է Գերմանիան, քանզի Կոստանդնուպոլսի կառավարությանը հրամայում էին գերմանական սպաները»[6]։

Ցեղասպանության ականատես, գերմանական հայտնի հրապարակախոս Հարրի Շտյուրմերը իրավացիորեն մեղադրում է գերմանական կառավարությանը այդ հակահումանիստական քաղաքականության մեջ, քանզի այլ կերպ չի կարելի բնութագրել Գերմանիայի գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ[7]։ Հ. Շտյուրմերը 1915—1916 թվականներին աշխատելով Կոստանդնուպոլսում որպես «Kölnische Zeitung»-ի թղթակից, փաստագրական հատուկ գիրք է գրել «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում» վերնագրով, որի 3-րդ գլուխը ամբողջապես նվիրված է արևմտահայության դեմ երիտթուրքերի կազմակերպած և իրականացրած աննախադեպ ոճրագործությունների նկարագրմանն ու դատապարտմանը։ Սարսափազդու է գրքի այն մասը, որտեղ նկարագրվում է Կոստանդնուպոլսի հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների ոճրագործությունները, որոնց ականատես է եղել նրա կինը, որը պատմել է. «Եթե այդպիսի տեսարաններ տեղի են ունենում կեսօրին, ամենաուժեղ երթևեկության ժամին Եվրոպական Պերայի կենտրոնում, ամենաշատ բանուկ փողոցում, ուրեմն ես կուզենայի իմանալ, թե ինչ են անում թուրքերը այդ խեղճ հայերի հետ երկրի դեռևս բոլորովին վայրի հեռավոր շրջաններում։ Եվ, եթե թուրքերը վարվում են այստեղ՝ մայրաքաղաքում վայրի գազանների նման, այն ձևով, որ եվրոպացի կինը չի կարող գնալ եվրոպական թաղամասի կենտրոնական փողոցով առանց ենթարկվելու նյարդային ցրնցման, ուստի ես չեմ կարող այլևս ապրել այս սարսափելի երկրում»։ Եվ ամեն անգամ, որ նա փողոց էր դուրս գալիս,

արտասվահեղձ, իրեն կորցնելու չափ ըմբոստացած այն ամենից, որ նա տեսել էր մի տարուց ավելի, մոլեգնում էր՝ «Դուք՝ գերմանացիներդ, ոճրագործներ եք, ստոր հանցագործներ եք, դուք, որ հանդուրժում եք, նման գազանություններ Թուրքերի մոտ, դուք, որ ձեր լրիվ հսկողության տակ եք վերցրել ամբողջ երկիրը, դուք մարդասպաններ եք, և այլևս երբեք ոտք չեմ դնի ձեր անիծյալ երկիրը։ Ախ, Աստված իմ, որքան եմ ատում Գերմանիան»։ «Սկսած այդ պահից, — այնուհետև գրում է Շտյուրմերը,— երբ իմ հարազատ կինը այդքան ստորությունից վրդովված, ըմբոստացած և զզված, դողահար և արտասվաթաթախ իմ դեմքին շպրտեց այս անեծքը, ես բոլոր իմ կապերը խզեցի Գերմանիայի հետ»[8]։

Ակադեմիկոս Ե. Տարլեն, իրավացիորեն դատապարտելով կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը, գրել է. «Գերմանացի հյուպատոսները, միսիոներները, զինվորականներն ու քաղաքացիական անձինք դժկամորեն, զուսպ կերպով (չէ՞ որ Թուրքիան կարևոր դաշնակից էր) իրենց կառավարությանը իրազեկ էին պահում պլանաչափորեն իրագործվող անլուր և անհամար զանգվածային կոտորածների մասին, սակայն ոչ Վիլհելմը, ոչ Բեթման Հոլվեգը հարկ չէին համարում միջամտելու։ Գերմանական իշխանությունների մի խոսքը բավական էր կանգնեցնելու ջարդերի երկու ղեկավարներին՝ Թալեաթ փաշային և Էնվեր փաշային»[9]։

Այո՛, կայզերական Գերմանիան բոլոր տերությունների շարքում ամենամեծ մեղսակիցն է հայերի ցեղասպանությանը։

Պաշտոնական Անգլիայի ավանդական քաղաքականությունը լիովին հաստատում է նաև նրա մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը։ Դրա համար կան բազմաթիվ փաստաթղթեր ու վկայություններ։ Անգլիայի նշանավոր պետական գործիչ, պրեմիեր մինիստր (1917—1922 թթ.) Լլոյդ Ջորջը իր հուշագրություններում «Հայաստանը մեր գոհն է»

վերնագրի տակ խոստովանել է. «Հայաստանը զոհաբերվել է մեր կողմից պատրաստած հաղթական զոհասեղանին»[10]։ Նա մատնանշել է, որ «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թվականների սարսափելի սպանդներին և 1915 թվականի ահավոր կոտորածին»[11]։ Արդարանալու նպատակով նա նշել է, որ Անգլիան պետք է «քավի իր ծանր մեղքը»[12]։

Երբ ցեղասպանության ժամանակ առանձին հայ մտավորականներ դիմում էին անգլիական կառավարող շրջաններին ու դիվանագետներին՝ արևմտահայությանը օգնություն ցույց տալու խնդրանքով, նրանք միայն իրենց ցավակցությունն էին հայտնում։ Այդ կապակցությամբ բնորոշ է անգլիական դիվանագետներից մեկի հեգնական արտահայտությունը. «Հենց որ մեզ հաջողվի Արարատի գագաթ հասցրնել մեր նավերը, այդ ժամանակ էլ կցուցաբերվի մեր օգնությունը»[13]։

Ֆրանսիական կառավարությունը հայերի ցեղասպանության հարցում, ինչպես XIX դարի 90-ական թվականներին, այնպես էլ առաջին աշխարհամարտում հանդես չի եկել ոչ միայն այդ ոճրագործությունը դատապարտողի դերում, այլ որոշակիորեն, ուղղակի կամ անուղղակի պաշտպանել է թուրքական կառավարողների հայաջինջ քաղաքականությունը ու գործողությունները։ Վարելով երկերեսանի և հայկական կոտորածների նկատմամբ թողտվության քաղաքականություն, Ֆրանսիան մեղսակից է արևմտահայության և մասնավորապես կիլիկիահայության ցեղասպանությանը։

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի դիրքորոշմանը, ապա նա հայերի ցեղասպանության հարցում հիմնականում մնաց դիտորդի դերում և ոչ մի լուրջ քայլ չկատարեց ոճրագործությունը դադարեցնելու և հայկական հարցը արդարացի լուծելու գործում։ Ճիշտ է, ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի պայմանագիրը, սակայն, այն մնաց թղթի վրա։ Հարկ է ասել, որ Կոստանդ-

նուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն մշտապես խարազանել է երիտթուրքական պարագլուխների հայաջինջ քաղաքականությունն ու գործողությունները, սակայն ամերիկյան կառավարությունը որևէ լուրջ քայլ չի կատարել հայերի ցեղասպանության կանխման, դադարեցման և դատապարտման գործում։

Ցեղասպանության ականատես, հայանի գրող ու հրապարակախոս Ա. Վեգները հանդգնամտորեն վերլուծելով մեծ տերությունների մեղսակցությունը հայասպանության, հայերի նկատմամբ թուրքական ոճրագործությունների մեջ, հատուկ նամակ է գրել մեծ տերությունների կառավարություններին՝ «Ճիչ Արարատից» վերնագրով։ Այդ անվիճելի փաստագրական հրապարակման մեջ նա անարգանքի սյունին է գամել ինչպես եվրոպական, այնպես էլ ամերիկյան կառավարողներին, որոնք իրենց երկերեսանի քաղաքականությամբ նպաստեցին հայերի ցեղասպանությանը։ Ա. Վեգները արդարացիությամբ և իրեն յուրահատուկ պատկերավորությամբ մերկացրել է նրանց քաղաքական ու դիվանագիտական խարդավանքները։ Նա ի լուր աշխարհի գրել է. «Ի՞նչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերությունները իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում։ Թույլ տվեք, Ձեզ, այդ պետությունների ղեկավարներին հիշեցնել Ձեր հանդիսավոր հավաստիացումներն ու երաշխավորությունները, որոնք պատերազմի ժամանակ խոստացել էիք Հայաստանին։ Թույլ տվեք ինձ մեկ անգամ ևս հիշեցնել Ձեզ և ողջ աշխարհին ֆրանսիական խորհրդի նախագահ Կլեմանսոյի 1918 թվականի հուլիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքերն այն մասին, որ մարդկայնության և արդարության օրենքների հիման վրա դաշնակից տերությունները մշտապես իրենց պարտքն են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար։ Մի՞թե չեն լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում են Պուանկարեի մեծագղորդ այն խոսքերը, որոնցով նա դիմեց Կիլիկիայի

կաթոլիկ հայերի պատրիարքին։ Լլոյդ Ջորջը, Ռոբերտ Սեսիլը չհապաղեցին հետևելու նրա օրինակին և նրանցից յուրաքանչյուրը որքան կոչեր են ստորագրել հանուն Հայաստանի ազատագրության։ Բրիան, Դեշանել, Օրլանդո, Սոնինյո, Վիլսոն՝ այնքան շատ են մեծահամբավ անունները, որոնք շքերթի պաշտոնական համազգեստների նման անցնում են մեր կողքով, իրենց հետևից թողնելով հիասթափության դատարկ հոհոցի արձագանքը։

Ինչպիսի՞ն եղավ միմյանց հաջորդած այդ հանդիսավոր երդումների արդյունքները, գուցե սրբազան խաչակրած արշավանքի հայտարարո՞ւմ։ Նոր թալան, սով ու կոտորած»[14]։

Ի տարբերություն ԱՄՆ-ի և եվրոպական տերությունների քաղաքականության, Ռուսաստանը այլ քաղաքականություն է վարել հայերի ցեղասպանության և ընդհանրապես արևմտահայության նկատմամբ։ Բնական է, Ռուսաստանը ղեկավարվում էր իր տնտեսական, քաղաքական ու ռազմաստրատեգիական շահերով, սակայն դրանք համընկնում էին հայության գոյատևման և ազգային ազատագրության խնդիրներին։ Այդ տեսանկյունից էլ ռուսական քաղաքականությունը պաշտպանության և աջակցության էր արժանանում թե արևմտահայության, թե արևելահայության կողմից։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական դիվանագիտությունը հասավ այն բանին, որ 1914 թվականի հունվարի 26-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև համաձայնագիր ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ (ռեֆորմներ) իրականացնելու վերաբերյալ։ Առաջին համաշխարհային պատերազմի սկսմամբ, երիտթուրքերի նախաձեռնությամբ ի չիք դարձան նախանշված բարեփոխումները։ Պատերազմի ժամանակ ռուսական դիվանագիտությունը ձեռնամուխ եղավ հայանպաստ կոնկրետ քայլերի։ 1915 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովը Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Ա. Իզվոլսկուն ու Ն. Բենկենդորֆին ուղարկած հեռագրում նշելով թուրքերի ու քրդերի կողմից

հայերի կոտորածի մասին, դատապարտելով այդ գործողությունները, ցուցում է տալիս նրանց առաջարկել Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին Ռուսաստանի «հետ համատեղ դիմում հրապարակել՝ ուղղված Բ. Դռանը, որի մեջ անձնական պատասխանատվությունը հայերի կոտորածի համար դրվի Թուրքիայի մինիստրների խորհրդի բոլոր անդամների, ինչպես և՝ այդ իրադարձությունների հետ առընչվող բոլոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձանց վրա»[15]: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների համաձայնության դեպքում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը անհրաժեշտ է համարում դիմումի տեքստը «որքան հնարավոր է շուտ հրապարակել ևրեք երկրներում էլ՝ միևնույն օրը»[16]:

Խորհրդանշական է, որ առաջին համաշխարհային պատերազմի դժվարին ու ծանր ժամանակաշրջանում, արևմտահայության տեղահանության ու ցեղասպանության պայմաններում խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարիատի խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց դեկրետ Արևմտյան Հայաստանի (Թուրքահայաստանի) մասին: Հիրավի, հայկական հարցի լուծման այդ նշանավոր փաստաթուղթը, որով Արևմտյան Հայաստանը հռչակվում էր անկախ պետություն, ծնվեց Ռուսաստանում և իր մեջ մարմնավորում է հայ-ռուսական դարավոր և անխախտ բարեկամությունը: Այն տոգորված է ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքներով, ամենևին էլ չեղյալ չի համարվել և մեր ժամանակում պահպանում է իր քաղաքական, իրավական ու բարոյական ուժը:

Հայոց ցեղասպանությունը դատապարտել են մի շարք ականավոր մտավորականներ ու գործիչներ: Մեր ժամանակում հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման խնդիրներով զբաղվել է ժողովուրդների մշտական դատարանը (տրիբունալը), որն ստեղծվել է Հռոմում, 1976 թվականին:

1984 թ. ապրիլի 13—16-ը Փարիզում տեղի ունեցավ այդ դատարանի նստաշրջանը, որը նվիրված էր հայերի ցե-

ղասպանության հարցերին։ Օրակարգը առաջադրված էր երեք կազմակերպությունների («Ազգային փոքրամասնությունների իրավունքների խումբ»— Ֆրանսիա, «Մշակութային դոյատևում»— ԱՄՆ, «Վտանգի մեջ հայտնված ժողովուրդների օգնության ասոցիացիա»— Գերմանիա) կողմից։ Պրոբլեմի վերաբերյալ հանդես եկան տարբեր երկրների մի շարք մասնագետներ։ Քանի որ Թուրքիան հրաժարվել էր ներկայացուցիչ ուղարկելուց, նստաշրջանը բավարարվեց Անկարայի միջազգային քաղաքականության ինստիտուտի «Հայկական պրոբլեմը. ինը հարց և ինը պատասխան» փաստաթղթի և Անկարայի համալսարանի պրոֆեսոր Թուրքայ Աթայովի՝ թուրքական տեսակետն արտահայտող գրավոր ցուցումների քննարկմամբ։ Նստաշրջանն ընդունեց եզրափակիչ փաստաթուղթ, որի իրավական ու քաղաքական էլեկտեն հանդիսանում ցեղասպանության հանցագործության կանխարգելման մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կոնվենցիան, նույն կազմակերպության, նույն թվականի, նույն ամսի 10-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Նյուրնբերգյան դատավարությունում ընդունված և 1951 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում հավանության արժանացած սկզբունքների մասին հանձնարարականը, մարդկության դեմ ուղղված հանցագործության վաղեմության ժամկետի մասին 1968 թ. կոնվենցիան և ժողովուրդների մշտական դատարանի 1979 թ. հունիսի 24-ին ընդունած կանոնագրությունը։

Ժողովուրդների մշտական դատարանը ընդունեց հետևյալ բովանդակությամբ որոշումը.

1. Միջազգային իրավունքին համապատասխան պետք է պահպանվեն հայ ժողովրդի արմատական իրավունքները։ 2. Դեպորտացիայի (տեղահանության) և զանգվածային բռնությունների միջոցով հայերի բնաջնջումը համարվում է ցեղասպանություն։ 3. Երիտթուրքերի կառավարությունը պատասխանատվություն է կրում այդ ցեղասպանության, այն գործողությունների համար, որոնք կատարվել են 1915—

1917 թթ.։ 4. Հայերի ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, որի պատասխանատվությունից չպետք է խուսափի թուրքական կառավարությունը՝ նախկին և այժմյան կառավարությունների հաջորդականությունը չընդունելու պատրվակով։ 5. Այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանության իրողությունը և որպես հետևանք հատուցել հայ ժողովրդին պատճառած վնասը։ 6. ՄԱԿ-ը, նրա յուրաքանչյուր անդամ-պետություն իրավասու են այդ հարցում աջակցելու հայ ժողովրդին[17]։

Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը համամարդկային խնդիր է, միջազգային իրավունքի հրատապ հարց։ Դա պայմանավորված է ոչ միայն XX դարի առաջին մեծ ոճրագործության դատապարտմամբ, այլ նաև նոր, ապագա ցեղասպանությունների կանխման կենսական անհրաժեշտությամբ։ Կարևոր է, որ 1987 թ. հունիսի 18-ին Եվրոպական պառլամենտը, որը միավորում է 12 երկրների պառլամենտականների, հատուկ որոշում ընդունեց 1915 թ. հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին։ Ընդունված փաստաթղթում («Հայկական հարցի քաղաքական լուծման մասին») նշված է, որ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիային համապատասխան, 1915—1917 թվականներին Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ կատարված ողբերգական իրադարձությունները հանդիսանում են ցեղասպանություն»[18]։

Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից և ցեղասպանության մասին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած փաստաթղթերից բխում է այն հետևությունը, որ ցեղասպանություն կազմակերպած և իրագործած կողմը պետք է պատասխանատվություն կրի ամենից առաջ մարդկային զոհերի համար, հատուցի պատճառած նյութական վնասը և իրենց տերերին վերադարձնի զավթած տարածքները։

Առաջին աշխարհամարտում հայերի ցեղասպանության հետևանքները չեն վերացվել։ Մոլորակի գրեթե բոլոր երկրներում սփռված ապրում են միլիոնավոր հայեր։ Մի՞թե ցեղասպանությունից հրաշքով փրկված հայության բեկորները մշտապես դատապարտված են օտար երկրներում իրենց հայրենիքի կորստով ապրելու։

Միջազգային իրավունքի, ՄԱԿ-ի կանոնադրության, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ցեղասպանության վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած որոշումների տեսանկյունից հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը համամարդկային նշանակություն ունի։ Դրա նպատակը ոչ միայն նոր ցեղասպանությունների կանխումն է, այլ նաև ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ազգամիջյան կոնֆլիկտների հաղթահարումը, ամբողջ աշխարհում կայուն ու մշտական խաղաղության հաստատումը։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայոց ցեղասպանության պատմագրությունը սկիզբ առավ հենց ցեղասպանության առաջին օրերից։ Տարագիր հայերից շատերը, փրկվելով կոտորածներից, հանգրվանեցին աշխարհի տարբեր երկրներում և, ականատես լինելով դեպքերին, իրենց հայրենասիրական պարտքը համարեցին թղթին հանձնել այդ սարսափների պատմությունը։ Պետք է հիշատակել Մուշեղ արքեպիսկոպոսին, Հայկ Ա-ճեմյանին, Ե. ք. Պարսամյանին, Գ. ծ. վ. Պալաբյանին և ուրիշների[1]։

Խորհրդային Հայաստանում մինչև 60-ական թթ. լույս տեսնվեցին հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրություններ։

1960-ական թվականները բեկումնային եղան այդ բնագավառում։ Մասնագետները (Ե. Սարգսյան, Ա. Մնացականյան, Ջ. Կիրակոսյան) իրենց հիմնահարցերը լուսա-

բանելիս անդրադարձան նաև հայկական կոտորածներին և մատնանշեցին, որ դրանց կազմակերպողներն ու ոգեշնչողները եղել են պանթուրանական նպատակներ հետապնդող իթթիհատականները։

Հայոց ցեղասպանության հարցերը լայնորեն լուսաբանվեցին Մ. Ներսիսյանի կողմից կազմված և նրա խմբագրությամբ հրատարակված ժողովածուում[2], որի նյութերը հավաքվել են Մոսկվայի ու Երևանի արխիվներից, պարբերականներից, ժամանակակիցների հաղորդումներից ու վկայություններից։ Ժողովածուի հակիրճ, բայց բովանդակալից առաջաբանում նշվում է, որ հայերի ջարդերը Թուրքիայում սկսվել են դեռ անցյալում, պետական քաղաքականություն են դարձել Աբդուլ Համիդ 2-րդի օրոք և հիմնականում ավարտվել են երիտթուրքերի կառավարման տարիներին։

Հետագայում պատմաբանները (Մ. Արզումանյան, Ս. Հակոբյան, Ս. Ստեփանյան, Ծ. Աղայան, Հ. Ինճիկյան, Հ. Սիմոնյան, Հ. Պողոսյան, Ա. Փափազյան, Ռ. Սահակյան) ավելի խորացրին հիմնահարցի ուսումնասիրությունը։ Ոմանք նաև փորձեր կատարեցին մասնագիտորեն ներկայացնել ցեղասպանության պատմագրությունը (Մ. Կարապետյան և ուրիշներ)։

1960-ական թվականները բեկումնային եղան նաև սփյուռքահայ պատմագրության մեջ։ Հրատարակվեցին մի շարք աշխատություններ, որոնցում իր ծավալով ու ընդգրկումներով առաջնակարգ նշանակություն ունի Գևորգ Ահարոնյանի ու Նազարեթ Թոփչյանի կողմից ստեղծված «Հուշամատյան մեծ եղեռնին»[3]։ Նրանում զետեղված նյութերը լույս են սփռում թուրք կառավարիչների հայահալած քաղաքականության, արևմտահայերի ծանր դրության, զանգվածային ջարդերի, դիմադրական մարտերի և այլ հարցերի վրա։

1960—1980-ական թվականներին Բեյրութում, Փարիզում, Թեհրանում և այլ քաղաքներում հրատարակվեցին մի շարք հայ պատմաբանների (Հ. Ղազարյան, Ն. Շիրինյան,

Ա. Ամուրյան և այլն) աշխատությունները, որոնք նվիրված էին ցեղասպանության խնդիրներին։

Սփյուռքահայ պատմագրության յուրահատկություններից մեկն այն է, որ հայազգի հեղինակներից շատերը գրում էին օտար լեզուներով։ Դրանցից պիտի հիշատակել Ա. Անտոնյանին, Ա. Սաֆրազյանին, Ի. Մկրտչյանին, Ա. Սարգսյանին (Անգլիայում), Ռ. Հովհաննիսյանին, Գ. Պողոսյանին, Վ. Քյուրքչյանին, Տ. Բոյաջյանին, Գ. Պարակյանին, Ռ. Կլոյանին (ԱՄՆ-ում), Ս. Աֆանասյանին, Ա. Տեր-Մինասյանին, Ա. Բեյլերյանին, Ս. Մուրադյանին (Ֆրանսիայում), Ժ. Քոչարյանին, Ա. Բերկյանին, Ա. Օհանջանյանին (Գերմանիայում) և այլն։ Նրանք նոր փաստերի հիման վրա կատարեցին մի շարք գիտական ընդհանրացումներ և դրանք պրոպագանդեցին այլազգի ընթերցողների լայն շրջաններում, որը չի կարող չունենալ իր քաղաքական հետևանքները։

Թուրք պատմագրությունը հայոց ցեղասպանության հարցերին անդրադարձավ կատորածներից անմիջապես հետո։ Առաջինը հանդես եկան իրենք՝ սճբարգործները՝ Թալեաթը, Ջեմալը և այլոք[4]։ Նրանք իրենց արդարացնելու համար կեղծում ու խեղաթյուրում էին պատմությունը, ենթադրում ու աղավաղում էին այն՝ արևմտահայերի ողբերգության պատճառ համարելով հենց իրենց՝ հայերին։ Երիտթուրքերի այդ գեկավարները նվազեցնում էին հայերի թվաքանակը, հայտարարելով, որ պատերազմի նախօրյակին ամբողջ կայսրությունում այն կազմում էր շուրջ մեկ միլիոն, նույնիսկ դրանից էլ պակաս, նշում էին, որ հայերը մինչև XIX դարի վերջերը ապրում էին թուրքերի հետ հաշտ ու խաղաղ, անգամ ավելի լավ, քան թուրքերը, որ նրանց անդորրը պղտորեցին կոմիտաչիները, այսինքն՝ հայ ազգային կուսակցությունները, որոնք թափանցելով Թուրքիա, սկսեցին գրգռել իրենց հայրենակիցներին օսմանյան իշխանությունների դեմ՝ նպատակ ունենալով անջատել Արևելյան Անատոլիան Թուրքիայից և ստեղծել ազգային պետականություն, որ հայերին ոտքի հանեցին այդ իշխանությունների

դեմ նաև մեծ տերությունները, հատկապես Ռուսաստանը, կամենալով ոտիթ ստեղծել միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և կորզելու նրանից զիջումներ։ Իթթիհատի պարագլուխները այնուհետև հայտարարում էին, որ իրենք առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հարկադրված եղան արևմտահայերին տեղափոխել կայսրության խորքերը, քանզի նրանք ապստամբվում էին իրենց դեմ, թալանում էին թուրքական թիկունքը, օգնում ու օժանդակում էին թշնամիներին, կամենում էին բնաջնջել թուրքերին ու բոլոր մահմեդականներին և այլն։ Իթթիհատի ղեկավարների այդ անհեթեթությունները կրկնում էին թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական պատմաբանները[5]։

Մինչև 1960-ական թվականները թուրքական պատմագրությունը լռել կամ համարյա լռել էր հայոց ցեղասպանության մասին։ Երբ հայ պատմագիտությունը սկսեց վեր հանել ցեղասպանության հիմնահարցերը և դատապարտել մեղավորներին, թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական պատմաբանները (Ջեմալ Քուրայի, Ահմեդ Բեղեի Կուրանի, Ահմեդ Ռուստեմ բեյ, Էնվեր Զիյա Կուրալ, Այան Յալչընն և այլն) հանդես եկան մի շարք աշխատություններով, որոնցում հիմնականում կրկնում էին երիտթուրքերի ղեկավարների վերոհիշյալ պնդումները և նշում, որ պատերազմի ընթացքում, եթե կոտորածներ են եղել, ապա եղել են և հայերի, և թուրքերի կողմից, ընդ որում սպանված թուրքերի թիվն ավելի մեծ է եղել, քան հայերինը[6]։ Իսկ ովքեր ընդունում էին հայկական կոտորածների փաստը, համարում էին դրանք մասնակի դեպքեր, որոնք կատարվել են ոչ թե կառավարության թելադրանքով, այլ քուրդ ցեղապետերի կամ մահմեդական կրոնամոլ ամբոխի մեղքով։ Թուրք պատմաբաններն իրենց կեղծ ու շինծու տեսակետները քաղաքակիրթ աշխարհում տարածելու համար հրապարակում էին դրանք օտար լեզուներով կամ օգտագործում էին վարձկան գրչակներին։

Հատկանշական է, որ վերջին հարյուր տարվա ընթացքում Թուրքիայում փոխվել է երեք հասարակական-քաղաքա-

կան վարչակարգ՝ միապետական, սահմանադրական-միապետական և հանրապետական, հայկական կոտորածներին անդրադարձել են պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանները, բայց բոլորն ուղղակի կամ անուղղակի ժխտել են հայոց ցեղասպանության փաստը։ Միայն Թուրքիայի կոմկուսի կենտկոմն է, որ 1984 թ. դատապարտեց իթթիհատի ոճրագործությունը հայերի հանդեպ, համարելով դա Թուրք ժողովրդի վրա բիծ դցող խայտառակություն։

Հայոց ցեղասպանությանը, դեռ առաջին աշխարհամարտի տարիներին, անդրադարձան աշխարհի շատ հասարակական-քաղաքական գործիչներ, անվանի հրապարակախոսներ ու գիտնականներ, ճանաչված քաղաքագետներ ու մարդասերներ. Ռուսաստանում՝ Վ. Բրյուսովը, Ա. Մանդելշտամը, Պ. Միլյուկովը, Վ. Գորդլևսկին, Անգլիայում՝ Ջ. Բրայսը, Ա. Թոյնբին, Ե. Ռոբինզոնը, Լ. Էյնշտեյնը, ԱՄՆ-ում՝ Հ. Մորգենթաուն, Գ. Մոնտգոմերը, Ու. Քինկը, Ֆրանսիայում՝ Ժ. Մորգանը, Է. Դումերգը, Ռ. Պինոնը, Հ. Բարբյուսը, Գերմանիայում՝ Յո. Լեպսիուսը, Յոզ. Մարկվարտը, Մ. Նիպագեն, Հ. Ֆիրբյուխերը, Հ. Շայուրմերը, Նորվեգիայում՝ Ֆ. Նանսենը և ուրիշներ։ Նրանք դատապարտում էին երիտթուրքերի եղեռնագործությունները և տերություններից պահանջում փրկել հայերին բնաջնջումից։

Հետագայում, երբ հայոց ցեղասպանության փաստը դնալով ավելի ու ավելի տարածվեց շատ երկրներ, և ցեղասպանությունը, որպես մարդկության հանդեպ հանցագործություն, դատապարտվեց առաջադեմ շրջանների կողմից, հանդես եկան նոր հեղինակներ, որոնք, մասնագիտորեն ուսումնասիրելով հիմնահարցը, համալրեցին այդ հանցագործությունը դատապարտողների և երիտթուրքերին անարգանքի սյունին գամողների բանակը։ Դրանցից պետք է հիշատակել Ռուսաստանում Ե. Տարլեին, Ա. Երուսալիմսկուն, Ն. Կրավչենկոյին, Վ. Խվոստովին, Բ. Շտեյնին, Անգլիայում՝ Դ. Լենգին, Կ. Ուոքերին, Ֆրանսիայում՝ Ժ. Դարզուին, Ի. Տերնոնին, Գերմանիայում՝ Է. Վերներին, Պ. Լա-

նին, Թ. Հոֆմանին և ուրիշների։ Նրանք մերկացրին իթթիհատի եղեռնագործ քաղաքականությունը և ցույց տվեցին, որ այն հետապնդում էր նվաճողական նպատակներ։

Գերմանացի ժամանակակից նշանավոր արևելագիտ պրոֆ. Էրնստ Վերները բազմակողմանի ու հավաստի փաստերով խարազանում է Թուրք պատմաբան Ս. Սոնմեզի ստահոդ պնդումները, հայերի ցեղասպանությունը ժխտելու անհիմն ու կեղծ փաստարկումները[7]։

Ֆրանսիացի պատմաբան-հետազոտողներ Ա. Համելենն ու Ժան-Միշել Բրոնը 1970-ական թվականներին հանդամանորեն ուսումնասիրել են հայերի ցեղասպանության իրողությունները, տարբեր երկրների արխիվներում պահպանված փաստաթղթերը, եղել են Թուրքիայում, Հայաստանում, հայ դաղթօջախներում, լսել են ցեղասպանությունից մազապուրծ հայերին, հանդիպել թուրք պաշտոնյաների հետ և եկել այն եզրակացության, որ Թուրք կառավարողները եղել են XX դարի առաջին ցեղասպանության կազմակերպողները ու իրագործողները, որ այդ դարում աշխարհի տարբեր երկրներում կատարվել են շատ ցեղասպանություններ, որոնց մեջ, սակայն, զանգվածային տեսանկյունից հայոց ցեղասպանությունը «առաջին ցեղասպանությունն է»[8]։

Արտասահմանում լույս են տեսնում հայոց ցեղասպանությանը նվիրված նյութերի ու փաստաթղթերի ժողովածուներ։ Մյունխենում, օրինակ, 1987—1988 թթ. հրատարակվեց «Հայերի ցեղասպանությունը» ժողովածուի առաջին հատորը, որի առաջաբանը գրել է հարցին քաջատեղյակ Ֆ. Երմակորը։

Սակայն արտասահմանում կան նաև պատմաբաններ, որոնք, ելնելով իրենց երկրների կառավարող շրջանների Թուրքիայի հետ ունեցած տնտեսական, քաղաքական ու ռազմական շահերից և այլ հանգամանքներից, ուղղակի թե անուղղակի արդարացնում են երիտթուրքերի հայակործան քաղաքականությունը։ Նրանք կրկնում են թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանների վերոհիշյալ դրույթները, նույնիսկ հայտարարում են, որ Թուրքիան առանց հա-

յերի բնաջնջման չէր կարող պաշտպանել իր անկախությունը ու տարածքային ամբողջականությունը։ Դրանցից պետք է նշել Անգլիայում Ժոան Հուսլիպին, ԱՄՆ-ում՝ Շոա ամուսիններին, Հ. Թոմասին, Ֆրանսիայում՝ Պիեռ Մոզերին, Պոլ Դյումոնին, Ժան Լյարոշին և այլոց։ Բայց իթթիհատի հայաջինջ քաղաքականությունը դատապարտող և հայկական դատը պաշտպանող հեղինակների թիվն, ինչ խոսք, ավելի մեծ է։

Հայերի ցեղասպանությունից անցել է ութ տասնամյակ, կանցնեն նաև բազմաթիվ տարիներ, բայց նրանք երբեք չեն մոռանա իրենց կորցրած Հայրենիքը և վառ կպահեն ղոհերի հիշատակը։ Հայերը պահանջում են, որ համաշխարհային մարդկությունն ընդունի իրենց ցեղասպանության փաստը և դատապարտի թուրքերի աննախադեպ ոճրագործությունը, պահանջում են իրենց կորուստների արդար հատուցում և վանդալիզմի իսպառ վերացում։

* *
*

Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում նոր, նշանակալից քայլ կատարվեց։ Ռուսաստանի դաշնության Պետական դուման 1995 թ. ապրիլի 14-ին ընդունեց հայտարարություն «1915—1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»։

Ահա այդ նշանավոր փաստաթուղթը։

«Հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915—1922 թթ. հայերի բնաջնջման մասին,

— հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած միջազգագրի ոգուն ու տառին,

— պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի միջազգագրին,

— ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ Եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ Թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

— նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

— ՌԴ Պետդուման դատապարտում է 1915—1922 ԹԹ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին,

— իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»[17];

14 ապրիլի 1995 թ.
«Հայաստան», 18 ապրիլի 1995 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԻՆՉ Է ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

. Lemkin R. Axis Rule in Occupied Europe. Washington. Carnegie Endowiment for International Peace. 1944.
2. Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками. Сборник материалов в семи томах. М., 1957. т. I, с. 67.
3. Там же.
4. Официальные отчеты второй части первой сессии Генеральной Ассамблеи ООН. Пленарное заседание Генеральной Ассамблеи. Стенографические отчеты 23 октября—16 декабря 1946 г. Флошинг Медоу—Нью-Йорк. 1946. с. 226.
5. Там же.
6. Там же, с. 140.
7. Международная защита прав и свобод человека. Сборник документов. М., 1990, с. 99.
8. Там же.
9. Там же, с. 100.
10. Там же, с. 659.
11. Там же.
12. Там же.

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԱՐՄԵՆՈՅԻԴ)

1. *Տե՛ս Պրենս Մ.. Անպատիժ ցեղասպանություն մը Հայասպանությունը։ Պեյրութ, 1969։*
2. История дипломатии. М., 1963, т. 2, с. 333.
3. *«Փորձ», ազգային եւ գրականական միամսեայ հանդես, երրորդ տարի, յուլիս եւ օգոստոս, թ. 7—8, Տփխիս, 1879, էջ 204—205։*
4. Архив внешней политики России (АВПР), *ф. Политархив*, д. 3460, л. 34.

5. Sächsisches Hauptstaatsarchiv Dresden, Gesandtschaft Berlin, Nr. 251, Bl. 127 b.
6. Lepsius J. Armenien und Europa. Berlin, 1896, S. 21.
7. Ibid.
8. «Die Welt des Islams», 1914, Band II, Heft 2/4, S. 287.
9. «Die Große Politik der Europäischen Kabinette 1871—1914. Sammlung der Diplomatischen Akten des Auswärtigen Amtes». Berlin, 1922—1926.
10. *Тенишев В. Позор* цивилизации. С.—Петербургъ, 1897, с. 20.
11. «Тифлисский листок», 1909, № 93.
12. Կազարեան Գ., *Յեղասպան Թուրքը, Պէյրութ, 1968, էջ 179։*
13. Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes. Bericht über das Schicksal des Armenischen volkes in der Tülkei während das Weltkrieges. Potsdam, 1919, S. 220.
14. Ibid., S. 222.
15. Ibid., S. 221—222.
16. Ենմբարսկի Ի., *Նամակներ աշխարհին, Երևան, 1990, էջ 80—81։*
17. Mevlan Zade Rifat. Türkiye inkilabin ive yüzü. Halep, 1929.
18. «Revue de la Etudes», Paris, 1970, N 333.
19. Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921, S. 136.
20. Lepsius J., Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919, S. IX.
21. Sächsisches Hauptstaatsarchiv Dresden. Außenministerium. Akten— Nr. 1952, Bl. 14—15.
22. Ibid., Bl. 76.
23. Ibid.
24. Deutsches Zentralarchiv. Historische Abteilung II, Merseburg. Repositur 89. 2.2.1. Königliches Geheimes Zivilkabinett, Akten— Nr. 1340, Bl. 192.
25. *Տէր Զօր լոյս հագաւ. Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ օծման տարիվ. 5 մայիսի 1991, Անթիլիաս-Լիբանան, էջ 12։*
26. *Նույն տեղում, էջ 13։*
27. Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը։ Հայկական վերջին կոտորածները և Թալեաթի փաշայ։ Պոսթոն, 1921, էջ 18։*
28. *Նույն տեղում, էջ 19։*
29. *Տէր Զօր, լոյս հագաւ։ Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ օծման տարիվով, 5 մայիսի 1991 թ., Անթիլիաս-Լիբանան, էջ 15։*
30. Թումանյան Հ., *Երկեր, հ. 6, Ե., 1959, էջ 212—213։*
31. Morgenthau H., Ambassador Morgenthau's story. Garden-City-New York, 1918, p. 325.

ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ

1. *Հայաստանի պետական պատկերասրահ, հուշամեռագրային բաժին ֆ. 30, ինվենտար, 423, թ. 412։*
2. Օն. Մխիթարյան, *Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 146։*
3. *«Տարոնոյ ինքնապաշտպանություն և ջարդը 1914—1915», պատմեց Եղիշե քհն. Տեր-Պարսամյան (նախկ. առաջն. փոխանորդ Տարոնոյ), գրեց Սիսակ Նալբանդյան, Ֆրեզնո, Քալիֆորնիա, Մ. Ն., 1920, էջ 54։*
4. Արամ Հայկազ, *Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957, էջ 207։*
5. *«1915—1965, Հուշամատյան մեծ եղեռնի», հրատարակչություն «Զարթոնք», Պեյրութ, 1965, էջ 777։*
6. Հակոբ Տեր-Հարությունյան, *Շապին Գարահիսարի ապստամբությունը, Պոստոն, 1955 թ.։*
7. *«Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները», աշխատագրեց Արամ Սահակյան, Պեյրութ, 1955, էջ 834։*
8. *«Հուշամատյան...», էջ 804։*
9. *«Հուշամատյան Մուսա լեռան», խմբագրեցին Մարտիրոս Քուշագեյան և Պողոս Մատուրյան, Պեյրութ, 1970, էջ 334։*
10. *Սարդարապատի հերոսամարտի նկարագրությունը, տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82։*
11. Ի. Սահակյան, *Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 195։*
12. *«Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թ. 1, էջ 161—162։*
13. Մ. Ղ. (Մանուկ Ղազարյան), *Ղարաբլիսայի հերոսամարտը (ականատեսի հիշողություններից), Թիֆլիս, 1920, էջ 12—13։*
14. *«Հայրենիք», 1932, թ. 3, էջ 82—83։*
15. *И. Х. Баграмян*, Мои воспоминания, Ереван, 1979, с.88.
16. Ի. Դ. Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970։*

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. *«1915—1965, Հուշամատյան մեծ եղեռնի», հրատարակչություն «Զարթոնք», Պեյրութ, 1965, էջ 128։*
2. *Д. С. Заврие*в, Восточная Анатолия, Экономический очерк, 1936, с. 24.
3. Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921.
4. *«Պլատֆորմ հայ հեղափոխական դաշնակցության», Երևան, 1990, էջ 46։*

5. «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, ծրագիր և կանոնագիր», Երևան, 1993, էջ 9։
6. «Հայաստանի ամբողջական ազատական կուսակցության ծրագիր», Երևան, 1993, էջ 2։
7. «Մեր խոսքը», 1994, նոյեմբերի 2։
8. *О. Г. Инджикян.* Буржуазия Османской империи, Ереван, 1977, с. 212—213.
9. «Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»։ Առաջաբան, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 14—20։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ

1. Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang, Berlin, 1921, S. 55.
2. Архив внешней политики России (АВПР). Ф. Канцелярия, 1914, д. 207, л. 32.
3. **Marquart Jos.** Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Berlin-Schöneberg. 1919, S. 53.
4. **Lepsius J.** Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919.
5. **Lepsius J.**, Was hat man den Armeniern getan? Die Zeit zu reden ist gekommen. «Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius». Nr. 11—12, September-Dezember, 1918, Potsdam, S. 113.
6. **Liebknecht K.**, Gesammelte Reden und Schriften. Berlin, 1966, Bd VIII, S. 438.
7. **Stuermer H.** Zwei Kriegsjahre in Konstantinopel. Skizzen deutsch-jungtürkischer Moral und Politik. Lausanne, 1917, S. 78.
8. Lbid., S. 58—59.
9. *Тарле Е.*, Европа в эпоху империализма. 1871—1919 гг. М.—Л., 1928, с. 392.
10. *Ллойд Джордж.* Правда о мирных договорах. М., 1957, т. 2, с. 390.
11. Там же.
12. Там же.
13. «Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft», Berlin, 1939, Nr. 5—6, S. 18.
14. **Wegner A.**, Der Schrei vom Ararat. An die Regierungen der sieghaften Völker. Leipzig, 1922, S. 2—3.

15. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ։ Երևան, 1991, էջ 339։
16. Նույն տեղում։
17. Tribunal Permanent des Peuples. Le Crime de silence. Le génocide des Arméniens. Flammarion, Paris, 1984, p. 348.
18. Parlement Européen. Le point de la session. Strasbourg. 15—19 Juin 1987, p. 40.

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ հրատարակվել է ահռելի քանակությամբ գրականություն ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և այլ լեզուներով։ Տեղի սղության պատճառով չենք կարող թվարկել բոլոր հեղինակներին, ինչպես և հիշատակված հեղինակների աշխատությունների վերնագրերը։
2. «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966.
3. «1915—1965, Հուշամատյան մեծ եղեռնի, հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի, Պեյրութ, 1965։
4. Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան, 1927։
5. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950.
6. Kemal H. Karpat, Ottoman population 1830—1914. Demographie and social characteristics, Wisconsin, 1985, p. 188.
7. Werner E. Die Armeniergreuel 1915/16—ein armenisches Greuelmärchen? «Zeitschrift für Geschichswissenschaft. XXI Jahrgang. 1973, Heft 2. Berlin.
8. Hamelen A. Brun J. La mémoire retrouvée. Mercure de France Paris, 1983.

ՀԱՆԶՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «1915—1965, Հուշամատյան մեծ եղեռնի», հրատարակչություն «Զարթոնք» օրաթերթի, Պեյրութ, 1965։
2. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией профессора М. Г. Нерсисяна. Ереван, 1966.
Հրատարակված է նաև հայերեն՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1991 թ.։

3. «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», առաջարանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988։
4. Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в двух томах, т. I. под редакцией профессора С. С. Степаняна. Ереван, 1991.
5. «Հայկական Հարցը. Հանրագիտարան»։ Խմբագրական հանձնաժողով, Երևան, 1991։
6. *Брюсов В.*, Летопись исторических судеб армянского народа. Ереван, 1989.
7. Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական Հարցը, մաս. Ա, Կ. Պոլիս, 1919։
8. Lepsius J. Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919.
9. Յո. Լեպսիուս, Հայաստանի ջարդերը, գաղտնի տեղեկագիր, Կ. Պոլիս, 1919։
10. Ա. Թոյնբի, Հայկական կոտորածները, Փարիզ, 1916։
11. Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990։
12. Թ. Պինոն. Հայերի բնաջնջումը. զերմանական մեթոդ, թուրքական գործակերպ, Կ. Պոլիս, 1919։
13. Ֆ. Նանսեն, Հայաստան և Մերձավոր Արևելք, Պեյրութ, 1958։
14. Ա. Ս. Համբարյան, Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990։
15. Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան. 1969։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ցեղասպանությունը 5
Հայասպանությունը (Արմենոցիդ) 7
Գոյամարտերը 19
Հետևանքները 40
Պետությունների, միջազգային կազմակերպությունների դիրքորոշումը և հայերի ցեղասպանության համաշխարհային ճանաչման խնդիրը 47
Պատմագրությունը 56
Օգտագործված աղբյուրները 64
Հանձնարարվող գրականություն 68

ԱԶԱՏ ՍԱՐԳՍԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ՍՄԲԱՏԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիր Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Տեխ. խմբագիր Ա. Պ. ՇԱՀԻՆՅԱՆ

Հանձնված է շարվածքի 20.04.1995 թ.։ Ստորագրված է տպագրության 12.07.1995 թ.։ Չափը 84×108¹/₃₂։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Պայմ. 3,32 մամ., տպագր. 4,5 մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 3,0 մամուլ։ Տպաքանակ 500։ Պատվեր № 10։ Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան, 378410, ք. Աշտարակ 2։

389 m

ԳԱԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0196304

A II
83662